

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷ

ՍՈՒՐԻԱ ՀԱՅՅՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱԴԵՍ ՕԺԱՆԴԱԿԵԼԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ Է

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

2011 Մարտ ամսէն սկսեալ սուրիական ասպնջական հայրենիք կ'ապրի իր պատմութեան ամենէն դժիւբօրերը: Սկզբնական ժողովրդական հակապետական սահմանափակ խրտումները, աստիճանաբար ստացան զարգացում, հասնելու համար գոյի իջեցումներու, հասնելու համար գոյի իջեցումներու:

Պետութիւն-ընդդիմութիւն ներքին տարակարծութիւնները միջազգայնացան: Արտաքին գերութեւ շրջանային սահմանակից պետութիւններ՝ միջամտութիւններ կատարեցին, խիստ նշումներու ենթակելով երկրի իշխանութիւնները, պահանջելով երկրի նախագահի հրաժարականը: Այդ նշումները տագնապ մեղմացնելու եւ անկողմնակալ մակարդակի վրայ փոխադրելու լուծման մը յանգելու փոխարէն, աւելի սրեցին գայն:

Անշուշտ այս բոլորի մէջ պէտք է տեսնել մեծ տերութիւններու եւ սահմանակից եղբայր պետութիւններու միութեան քայքայումը: Անոնք միութեամբ, բարոյապէս եւ զինապէս թիկունք կանգնեցան կողմերուն: Ծանր գեներով զինեցին գանձ: Օրինակաբան պահպանման սկզբունքի անուամբ գորակցութիւններ ստեղծեցին: Երեւոյթներ՝ որոնք առաւելագոյն խորացուցին ընդդիմութիւն - պետութիւն գոյառող տագնապը, որ արտայայտութիւն գտաւ երկրէն ներս միջեւ օրս արձանագրուող ամենօրեայ ահաբեկչութիւններով, որը նոր հարիւրաւոր նոր սպանութիւններով, հրթիռային եւ օդանաւային ուժերով մեղմացնելու փորձերու նոր ակտներով:

Ծայրայեղութիւնները սաստկացան այն աստիճանի, որ ռազմական ծանրաբարձ կառնիք փողոց իջան հիմնապատակ վերացնելու համար տակաւին ապրող ամբողջ թաղեր, անպատասպար փողոցները ձգելով բազմաաւարիւր

Շարք էջ 18

ՀԱՅ ՍՊԱՅԻՆ ՍՊԱՆՆԱԾ ԱՏՐՊԵՅՃԱՆՑԻ ՍԱՖԱՐՈՎԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ

2004-ին Պուտայէշտին մէջ ՆԱԹՕ-ի շրջագիծէն ներս դասընթացներու ընթացքին հայ սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարելով սպաննած ատրպէյճանցի սպայ Ռամիլ Սաֆարով, Հունգարիոյ դատարանին կողմէ ցմահ բանտարկութեան դատապարտուած էր: Օգոստոս 31-ին, արտայանձման ենթարկուելով, Սաֆարով անմիջապէս ներում ստացաւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի կողմէ:



Ատրպէյճանցի ռեզրազոր Ռամիլ Սաֆարով

Հունգարիոյ եւ Ատրպէյճանի կառավարութիւններուն միջեւ տեղի ունեցած այս համաձայնութիւնը խիստ դատապարտուածի արժանացաւ, ոչ միայն Հայաստանի կողմէ, այլ նաեւ՝ միջազգային կառուցներու եւ մեծ պետութիւններու կողմէ:

«Դա տեղի է ունեցել, քանի որ Եւրոպական միութեան եւ ՆԱԹՕ-ի անդամ Հունգարիայի իշխանութիւնները գործարքի մէջ են մտել Ատրպէյճանի իշխանութիւնների հետ», - յայտարարեց ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսեան, Ազգային, Անվտանգութեան Խորհուրդի այս առթիւ գումարած նիստէն ետք:

Ներկայացնելով Սաֆարովի արտայանձման առնչութեամբ Հայաստանի Հանրապետութեան տեսակէտն ու ՀՀ Ազգային Անվտանգ

գութեան Խորհուրդի նիստին ընդունուած որոշումը՝ Սարգսեան ըսաւ. - «Իրենց այս համատեղ գործողութիւններով Հունգարիայի եւ Ատրպէյճանի իշխանութիւնները դուռ բացեցին նման յանցագործութիւնների կրկնութեան համար: Այս որոշումը նրանք ուղերձ են տալիս մարդասպաններին: Նրանք այսուհետեւ գիտեն, որ էթնիկ կամ կրօնական ատելութեան հողի վրայ կատարուած սպանութիւնը կարող է անպատիժ մնալ: Ես դա հանդուրժել չեմ կարող: Հայաստանի Հանրապետութիւնը դա հանդուրժել չի կարող: Հայ ժողովուրդը դա չի ներելու: Ես պաշտօնապէս յայտարարում եմ, որ այսօր մենք կասեցնում ենք

Հունգարիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնները եւ բոլոր պաշտօնական կապերը: Մենք ակնկալում ենք մեր բոլոր գործընկերների յստակ եւ միանշանակ գործողութիւնները այս դէպքի կապակցութեամբ: Այս ամէնը հանդուրժողները վաղը պատասխան են տալու պատմութեան առջեւ»:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը՝ փոխանցելով, որ տեղեկացրել է Հունգարիայի արտաքին գործերի նախարարութեանը երկու պետութիւնների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները կասեցնելու որոշման մասին եկաւ յայտարարելու, - «Հայաստանի իշխանութիւնները Հունգարիայի կառավարութեանը բազում առիթներով տեղեկացրել են Ռամիլ Սաֆարովի կողմից իրականացուած սպանութիւնը Ատրպէյճանի պետական մակարդակով՝ ներառեալ նախագահի, փառաբանելու եւ արդարացնելու մասին: Հունգարիայի կառավարութիւնը չէր կարող իրազեկ չլինել Ատրպէյճանի իշխանութիւնների տարբեր մակարդակներում հնչեցրած բազում յայտարարութիւններին, որոնք պէտք է որ բաւարար հիմք հանդիսանային կասկածի ենթար-

Շարք էջ 5

ՅՈՅՑ՝ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԴԵՄՊՆԱՍԱՆ ԱՌՋԵՒ

Սեպտեմբերի 1-ին «Հայզն» Միութիւնը եւ ՄԴԶ «Սարգիս Տիրունի» Ուսանողական Միութիւնը բողոքի ցույց կազմակերպեցին:

Անոնք իրենց ցույցը սկսան ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան դիմացէն, ապա ուղղուեցան Հայաստանի մօտ Հունգարիոյ հիւպատոսութեան առջեւ:

Ցույցի մասնակիցները արագործնախարարութեան առջեւ նամակ կարդացին եւ իրենց դժգոհութիւնը յայտնեցին հայ դիւանագէտներու անգործութեան վերաբերեալ՝ մասնաւորապէս նախարար Էտտուարտ Նալպանտեանին:

Հունգարիոյ հիւպատոսութեան առջեւ ցուցարարները գետին նետեցին Հունգարիոյ դրօշը, ապա ցուցի մասնակիցները երգեցին հայրենասիրական երգեր եւ միահամուռ կոչեցին «ամօթ», «մահ ոստիւն»:



Երիտասարդները Հուգարիոյ դեսպանատան առջեւ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արբեւելանցի մարդասպան հաբեկչին պաշտօնական Բաքուէն յանձնելու Հունգարիայի իշխանութիւնների այս ստոր քայլն արժանի է ամենայն պարսաւանքի եւ արգահատանքի: Իրեն Եւրոպական արժէքներին, մարդու իրաւունքների պաշտպանութեանը հաւատարիմ համարող այս պետութիւնը մարդասպանին ազատութիւն շնորհեց՝ այս կերպ մարտահրաւէր նետելով ողջ քաղաքակիրթ աշխարհին, ապացուցելով, որ իր համար աղբբեջանական նաւթադոլարները շատ աւելի թանկ են, քան արդարութիւնը, անմեղ զոհին կացնահարած դահճին արժանի պատիժ տալը: ՄԴԶ Հայաստա-

Շարք էջ 4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՈՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 16, 2012
VERDUGO PARK - ԿԼԷՆՏԷՅԼ



ՊԱՔՈՒՆ ՈՒ ԲՈՒԴԱՊԵՇՏԸ ԱՐԵՑԻՆ ՍԽԱԼ, ՈՐԸ ՆՐԱՆՑ ԹՈՅԼ ՏՈՒԵՑԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՆ ՈՒ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ

ՅՈՎԱՅԷՓ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ, ՌԱՀՀԿ ԱՒԱԳՓՈՐՁԱԳԵՏ

Ակնյայտ է, որ մոլորակը մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտայանձնման մասին նախապես տեղեակ են եղել թէ Բրիտանիայում, թէ Ուաշինգթոնում եւ թէ Երեւանում: Եւ այդ քայլը լուրջապես թոյլ տրուեց, քանի որ այս երեք մայրաքաղաքներն էլ ունենին իրենց շահը՝ թուլացնել եւ Հոլանդարիայի գործող իշխանութեանը, եւ Իլհամ Ալիևին:

Հունգարիայի ներկայիս վարչապետ Վիկտոր Օրբանը եւրոպական ընտանիքի «աչքի գրողն» էր դեռեւս 1998-2002 թուականներից: Նրա ազգայնական եւ ալյատեաց հոետորաբանութիւնն ու քաղաքականութիւնը Բրիտանիայում միշտ էլ համարել են եւրոպական եւ համամարդկային հումանիտական արժէքների հետ անհամատեղելի ու վտանգաւոր: Օրբանը նաեւ մեղադրուեց իր անտորիտար վարչապետական կառավարման մոտեւի կիրառման համար, որի արդիւնքում խորհրդարանի լիազօրութիւնները նուազեցուել էին: 2002թ.-ին, երբ ոչ առանց Բրիտանիայի աջակցութեան ձախերն ու լիբերալները յաղթեցին Օրբանի գլխաւորած «Ֆիդէշ» աջ կենտրոնամէտ կուսակցութեանը (որն, ի դէպ, ԵժԿ անդամ է)՝ Օրբանը բողոքեց, թէ ընտրութիւնների արդիւնքները կեղծուել են: Սակայն եւրոպական դիտորդների յայտնաբերած միակ խախտումը պետական հեռուստաընկերութեան լուսաբանումներում «Ֆիդէշին» ակնյայտ առաւելութիւն տալն էր:

Համաշխարհային ճգնաժամի հետեւանքներից Հոլանդարիայի բնակչութեան դժգոհութիւնների հողի վրայ 2010թ.-ին «Ֆիդէշը» կրկին եկաւ իշխանութեան, եւ Օրբանը նորից նշանակուեց վարչապետ: Սակայն այս անգամ նրա

«չկամեցողների» թուում յայտնուեցին ոչ միայն Բրիտանիայ, այլ նաեւ Ուաշինգթոնը, ուր իշխանութեան էր եկել Օպամայի ժողովրդավարական վարչակարգը, որը շատ աւելի մեծ նշանակութիւն է տալիս մարդու իրաւունքներին՝ երբեմն անգամ յանուն դրա գոհաբերելով ինչ-ինչ ալյարոպական աշխարհաքաղաքական դիրքեր: Մինչդեռ ազգայնական պոպուլիստ եւ ալյատեաց, կղերականութիւնը քաջակերող (դրա համար Վատիկանի կողմից անգամ Սբ. Գրիգոր Մեծի միաբանութեան մեծ խաչին արժանացած) Օրբանի իշխանութիւնը չի տեղաւորուում ԱՄՆ-ի հռչակած արտաքին քաղաքական առաջնահերթութիւնների շրջանակում եւ արդէն հասցրել է դառնալ Ուաշինգթոնի կոշտ քննադատութեան թիրախը: Ի դէպ, Օրբանով հիացած են ոչ միայն կղերական Վատիկանում, այլեւ մեծապետական Ռուսաստանում, որտեղից պարբերաբար գովեստի խօսքեր են հնչում «եւրոպական «գլոբալ էլիտայի ձեւաւորման ծրագրերի ճանապարհը փակած» «եւրոպական Հիւկո Չավեսի» հասցէին (<http://www.fondsk.ru/news/2012/05/18/ugo-chaves-evropy.html>): Մոսկուայում յատկապէս ոգեւորուած են 2012թ. Յունուարի 1-ին Հոլանդարիայում ընդունուած նոր Սահմանադրութեամբ, որն առաջինն է ԵՄ երկրների մէջ, որ վերջ է դնում «մշակութային բազմազանութեանը»: Սահմանադրութեան նախաբանում նաեւ նշուեց է միջին դարերում գոյութիւն ունեցող մարդարական կայսրութեան տարածքների հանդէպ մերօրեայ Հոլանդարիայի «ժառանգորդութեան» մասին՝ տարածքներ, որոնք գերազանցում են ներկայիս Հոլանդարիան 2-3 անգամ եւ ներառում ամբողջ Սլովակիան, ուքրանական Անդրկարպատները, սերպա-

կան Վոյեւոդինան, գրեթէ ամբողջ Խորուաթիան եւ Ռումինիայի կէսը: Մի խօսքով՝ Եւրոպայի կենտրոնում իշխանութեան եկած այս թիւրիմացութիւնը եւրոպական արժէքների հակապատկերն է եւ պատահական չէ, որ ընկաւ իր իսկ արժէքային համակարգի «փոսը», երբ թքած ունենալով համամարդկային հումանիտական եւ տարրական բարոյական արժէքների վրայ, իր «ազգային շահերի», այն է՝ Հոլանդարիայի համար մի քանի միլիարդ տոլար ատրպէյճանական ներդրումներ ապահովելու համար նողկալի մարդասպանութիւն կատարած յանցագործին յանձնեց մի երկրի, որին Եւրոպայում ոչ պաշտօնապէս ընդունում են որպէս արեւելեան նաւթային էմիրութիւն, որի արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը հիմնուած է բացայայտ ռասիզմի վրայ, ուր մարդասպանը ակնյայտօրէն խուսափելու էր իր արժանի պատիժը կրելուց, աւելին՝ արդէն մինչեւ արտայանձնումը հերոսացուեց էր: Այնպէս որ, Օրբանը պատկանում է եւրոպական արժէքները չընդունող եւ դրանք ամեն պատէհանապատէհ առիթով վատաբանող ալյատեացների շարքին: Այժմ Բրիտանիայի եւ Ուաշինգթոնի համար փայլուն հնարաւորութիւն է ստեղծուել ազատուելու այդ էկզոտիկ վարչակարգից: Եւ դրա առիթը տուեց հենց ինքը՝ Օրբանը:

Ոչ պակաս անհեռաւոր գտնուեց Ալիևը, որի սխալի մէջ եւս շահագրգռուած էին Բրիտանիայի ու Ուաշինգթոնը, սակայն, յամենայնդէպս, ոչ աւելի, քան պաշտօնական Երեւանը: Առաջին երկուսը Ատրպէյճանի մասով դրանով առնուազն երկու ինդիք են լուծում:

1. Ղարաբաղեան հակամարտութեան հարցում անասան թուացող եւ Արեւմուտքի համար անընդունելի ստատուս-քոնոյի խարխումանն ուղղուած գործըն-

թացների խթանում, տուեալ դէպքում՝ Ատրպէյճանի հանդէպ՝ որպէս առաւել անգիջում կողմի, ճնշումներ գործադրելու յաւելեալ նախադրեալների ձեւաւորմամբ:

2. Ատրպէյճանի՝ նաւթային գերշահոյթների շնորհիւ խիստ կամակոր դարձած ու Արեւմուտքին արդէն նեարդայնացնող վարչակարգի գլոբալ առումով թուլացում եւ ներքին հակակշիռների գորեղացմամբ ժողովրդավարացում: Դա յատկապէս կարեւոր է՝ հաշուի առնելով այդ երկրում 2013թ. Հոկտեմբերին տեղի ունենալիք նախագահական ընտրութիւնները:

Երեւանը, բնականաբար, ամենաշատն է շահագրգռուած Ատրպէյճանի դիրքերի թուլացմամբ եւ Պաքուին միջազգային ճնշումների թիրախ դարձնելու հարցում: Ճնշումներ, որոնց հետեւանքները կարող են լինել նուազագոյնը որոշակի գիջումների կորզումը բանակցային ձեւաչափում (ԼՂՀ-ի վերադարձ բանակցային սեղանի շուրջ, ազատագրուած տարածքների վերաբնակեցման գործընթացի խթանման հանդէպ Միւսակի խմբի համանախագահողների առաւել լուրջ վերաբերմունք կամ գոնէ Ստեփանակերտի արդիականացում օդանաւակայանի իրական վերագործարկում), իսկ առաւելագոյնը՝ ԼՂՀ անկախութեան ճանաչման հարցում ՄԽ համանախագահողներից լուրջապէս համաձայնութիւն, ինչը կը դառնար Արցախի միջազգային ճանաչման գործընթացի սկիզբը: Ի վերջոյ՝ ներկայիս ռասիստական եւ հայատեաց Ատրպէյճանի թուլացումը Հայաստանի ու Արցախի համար անվտանգութեան հարց է: Մեր հարեւան երկրում առկայ մարդատեաց ֆէյտալական վարչակարգի կազմաքանդումն ու արդիական ժողովրդավար պետութեան կառուցումը բխում են ոչ միայն Հայաստանի եւ Արեւմուտքի, այլեւ հենց Ատրպէյճանի բազմազգ ժողովրդի շահերից:

«ՀԵՏՔ»

Ո՛Վ ԿԸ ՑԱՆԿԱՆԱՅ ԴԵԿԱՎԱՐԵԼ ՆՄԱՆ ԵՐԿԻՐԸ

ՆԱԹԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանը գնում է այնպիսի իրավիճակի, երբ, հաւանաբար, հարկ է լինելու մարդ փնտռել, ով կը ղեկավարի երկիրը: Ամէն դէպքում, ակնյայտ է, որ ակտուալ քաղաքական գործիչների շրջանում նման երկրի նախագահ դառնալ ցանկացողների թիւը քիչ է: Ասենք, դա տարօրինակ չի թւում, որովհետեւ Հայաստանի ապագայ նախագահից ահռելի համարձակութիւն է պահանջուելու:

Հնարաւոր է, հենց այդ պատճառով է, որ ովքեր նախկինում յաւակնում էին այդ պաշտօնին, նախընտրում են լուր, որովհետեւ Հայաստանին ոչ միայն ծանր ընտրութիւն է սպասուում, այլեւ, հնարաւոր է՝ «մսի պոկում», ինչպէս տեղի ունեցաւ Վրաստանի հետ: Եւ այդ իրավիճակում Հայաստանի նախագահ կարող է դառնալ կամ երկրում բացարձակ լեգիտիմութիւն վայելող մարդ, կամ էլ հայկական Սահակաշվիլի, ով կարող է խզել հին կապերը, չափանիշները, կարծրատիպերը եւ որոշակի արկածախնդրութեամբ, սակայն հետեւողականօրէն երկրում նոր համակարգ կառուցել:

Հայաստանում բարեփոխումները կարծես կանգ են առել՝ սպա-

սելով նման մարդու: Ամէն ինչ կարծես օրէնսդրական առումով արուած է, ամէն ինչ պատրաստ է, իսկ քաղաքական կամքը, ինչպէս ասում է ԱՄՆ դեսպան ճոն Հեֆերնը, չկայ: Չկայ կամք՝ չկայ բարեփոխում, չկայ բարեփոխում՝ չկան ներդրումներ, չկան ներդրումներ՝ չկայ Արեւմուտքի աջակցութիւնը:

Եւ ստացում է բաց շրջան: Սերժ Սարգսեանը յայտարարել է եւրախտեգրման կուրսի, եւրոպական բարեփոխումների մասին, ստացել է Արեւմուտքի որոշակի աջակցութիւնը, յետոյ խստացրել է «լուռ հակառուսական հոետորաբանութիւնը» եւ մի քիչ էլ է աջակցութիւն առաջել: Սակայն վերջնական վատահոլութիւն, որ Արեւմուտքն անվերապահ աջակցում է Սարգսեանին, դեռեւս չկայ: Եւ ողջ ինդիքը քաղաքական կամքի մէջ է:

Ի՞նչ կը լինի, եթէ Արեւմուտքն աչքպէս էլ չտեսնի այդ կամքը եւ Սերժ Սարգսեանին չաջակցելու որոշում ընդունի: Ինչպիսի՞ն կը դառնայ Հայաստանի քաղաքական լանդշափտը, արդեօք կը գտնուի մէկը, ով, ինչպէս Սահակաշվիլին, ունակ կը լինի խզել խորհրդային անցեալի հետ կապը: Կարելի՞ է «անակնկալներ» սպասել, երբ առաջագրման նախօրէին ասպարեզում կը յայտն-

ուի թարմ դէմք եւ առաջ կը տանի գործընթացները:

Այսօր դեռեւս դրա նախադրեալները չկան, ցաւոք, չկան: Եւ ակնյայտ է, որ Արեւմուտքը պնդելու է, որ Սերժ Սարգսեանն աւելի մեծ կամք ու համարձակութիւն դրսեւորի ինչպէս սեփական օլիգարխների, այնպէս էլ արտաքին պատրոնների հետ յարաբերութիւններում: Ասենք, մէկը միւսի հետ կապուած է: Եթէ Սերժ Սարգսեանը աւելի կոշտ վերաբերուի օլիգարխների հետ, դա արձագանք կը ստանայ Ռուսաստանում, եւ հակառակը, եթէ կոշտացնի հոետորաբանութիւնը Մոսկուայի դէմ, Հայաստանում օլիգարխների դիրքերը կը թուլանան:

Հակառակ դէպքում, Սերժ Սարգսեանն իրօք կարող է առանց աջակցութեան մնալ, իսկ այդ դէպքում նոյնիսկ վարչական մեքենայի առկայութիւնը չի աշխատի: Այդ պատճառով միակ հնարաւորութիւնը քաղաքական կամքի դրսեւորումն է: Բացի այդ, նման կամքի առկայութիւնը նրա մրցակիցներին կը մղի նախապէս բացասական դաշտ, որտեղ նրանց հարկ կը լինի կամ բացատրել, որ օլիգարխներն ու Եւրասիական միութիւնը լաւ են, կամ էլ պարզապէս շանտաժ անել: «ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

ՀՀ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՅԸ ԴԻՄԵԼ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ԵԻՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանը Մարդու իրաւունքների միջազգային դատարանի դիմում է ներկայացրել ազատ ընտրութեան իրաւունքի խախտման հիմքով: Aravot.am-ի հետ զրոյցում Մարդու իրաւունքների եւրոպական դատարանում առաջին նախագահի ներկայացուցիչ Վահէ Գրիգորեանը տեղեկացրեց, որ խօսքը վերաբերում է 2008-ի Փետրուարին նախագահական ընտրութիւններում ազատ ընտրութեան իրաւունքի խախտմանը, ինչպէս նաեւ զուգահեռ վիճարկում են այլ իրաւունքների խախտումներ:



Մարդու իրաւունքների եւրոպական դատարանում առաջին նախագահի ներկայացուցիչ Վահէ Գրիգորեան

Վ. Գրիգորեանը նաեւ յաւելեց. «Դատարանը դիմումը հաղորդակցել է կառավարութեանը՝ անձնական ազատութեան եւ ազատ տեղաշարժման իրաւունքների հարցով՝ Մարտի 1-ի դէպքերի առաւօտեան հատուածին, երբ առաջին նախագահին ձեռքադրել են եւ տեղափոխել են իր բնակարան: Միւս կէտն այն է, որ առաջին նախագահի նկատմամբ իր քաղաքական համոզմունքների բերումով խտրական վերաբերմունք է ցուցաբերուել»:

Մեր զրուցակիցը յաւելեց. «Երբ մարդը դիմում է Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի ՀՀ կառավարութեան դէմ, նա դրանով ստիպում է ՀՀ կառավարութեան կողմից ստանձնած միջազգային պարտաւորութիւնները, որոնք նաեւ Սահմանադրութեան պարտաւորութիւններ են կառավարութեան համար, քննութեան առարկայ դարձնել միջազգային դատական ատեաններում: Եթէ ՀՀ կառավարութեան դէմ

ներկայացուած դիմումը մերժուած է, դա նշանակում է, որ ՀՀ-ն գտնուել է իր միջազգային պարտաւորութիւնների ստանձնուած դիրքում: Եթէ դիմումը բաւարարուել է, նշանակում է՝ ՀՀ-ն ամբողջ միջազգային համայնքի առաջ ստանձնած պարտաւորութիւնները խախտել է: Եւ այն անձինք, ովքեր միջազգային դատարանում դիմում են ներկայացնելը ՀՀ կառավարութեան դէմ իբր հայրենասիրական հողի վրայ անընդունելի են համարում, նրանք առաջինը պիտի գնան ՀՀ կառավարութեանը ստիպեն, որ կառավարութիւնը միջազգային հանրութեանը տուած իր խոստումներից հետ չկանգնի: Սա ոչ միայն ՀՀ միջազգային պարտաւորութիւններին է վերաբերում, այլեւ ՀՀ կառավարութեան, դատարանների եւ օրէնսդիր իշխանութեան՝ Սահմանադրութեամբ ծանրաբեռնուած պարտականութիւններին է վերաբերում:

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԴԵՍ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԵՊԻ ՍԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՏԱՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ

Ընդդիմադիր պատգամաւոր, Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանը կտրականապէս դէմ է անցած տարի Հոկտեմբերին Սանկտ Պետերբուրգում ստորագրուած ԱՊՀ տարածքում ազատ առեւտրի գոտու ստեղծման մասին պայմանագրի վաւերացմանը:

Ազգային ժողովում ՀԱԿ խմբակցութեան անդամը համոզուած է, որ գալիք շաբաթ խորհրդարանի վաւերացմանը ներկայացուելիք այդ պայմանագիրը դէմ է Հայաստանի շահերին եւ մեր երկիրը տանում է դէպի Ռուսաստանի գլխաւորութեամբ գործող Մաքսային միութիւն:

Հայաստանի նախկին վարչապետի խօսքով, չնայած պայմանագիրը կոչուած է ազատ առեւտրի գոտու մասին, սակայն իրականում այնտեղ արտացոլուած են ապագայում ողջ ԱՊՀ տարածքում մաքսային միութեան ձեւաւորման սկզբունքները»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք ինքը մտավախութիւն ունի, որ խնդրոյ առարկայ պայմանագիրը միջանկեալ քայլ է դէպի Մաքսային միութիւն, Հրանդ Բագրատեանն արձագանքեց. - «Ոչ թէ մտավախութիւն ունեմ, այլ պայմանագրում այդպէս էլ ասուած է, որ յաջորդը կը լինի Մաքսային միութիւնը»:

Պետերբուրգում ստորագրուած փաստաթղթի նախապատրաստական աշխատանքներին հայկական կողմից մասնակցել է նաեւ էկո-

նոմիկայի նախարար Տիգրան Դաւթեանը: Էկոնոմիկայի փոխնախարար Գարեգին Մելքոնեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում արձագանքելով Բագրատեանի յայտարարութիւններին՝ ասաց. - «Ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագրի շրջանակներում, այդ կան հանումներ: Հայաստանի ծագում ունեցող սպորանքների համար որեւէ ստորագրող կողմ որեւէ հանում չի կատարել: Այս համաձայնագրի ուժի մէջ մտնելուց յետոյ հայկական ծագում ունեցող ապրանքները առանց որեւէ բացառութեան արտահանուելու են առանց մաքսատուքերի եւ ներմուծուելու են այդ երկրներից առանց մաքսատուքերի»:

Փոխնախարարը արձագանքեց նաեւ Մաքսային միութեան վերաբերեալ Բագրատեանի պնդումներին՝ ասելով. - «Այդ, առեւտուրը դա մի աստիճան է, որը մաքսային միութիւն կազմող երկրները սովորաբար անցնում են: Բայց ազատ առեւտուր կնքել, դա դեռեւս չի նշանակում, որ անպայմանօրէն դու պիտի յաջորդ քայլն իրականացնես եւ անցնես մաքսային միութիւն»:

Անցած տարուայ Հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ անդամ ութ երկրներ (այդ թւում Հայաստանը) ստորագրեցին ազատ առեւտրի գոտու ստեղծման մասին պայմանագիր: Փաստաթուղթը հրաժարուեցին ստորագրել Ադրբեյջանը, Ուզբեկստանը եւ Թուրքմենստանը:

«Ա1+»-Ը ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԵԹԵՐ



«Արմնիւզ»-ի ներկայացուցիչ Արտակ Ալեքսանեան (ձախին) եւ «Ա1+»-ի գլխաւոր տնօրէն Մեսրոպ Մովսէսեան ասուլիսի ընթացքին

10 տարի առաջ հեռուստաեթերից գրկուած «Ա1+»-ը Սեպտեմբերի 10-ից կը հեռարձակուի «Արմնիւզ»-ի եթերով: «Արմնիւզ» հեռուստաընկերութեան եթերում ամէն օր ժամը 21-ին կը հեռարձակուի «Ա1+»-ի «Այբ-Ֆե» լրատուական հաղորդումը:

«Ա1+» հեռուստաընկերութեան գլխաւոր տնօրէն Մեսրոպ Մովսէսեանը Սեպտեմբեր 4-ին լրագրողների հետ հանդիպմանը տեղեկացրեց, որ թողարկումներում մեծ տեղ է յատկացուելու մշակոյթին:

«Հեռուստահաղորդումն ամբողջութեամբ պատրաստելու է «Ա1+» հեռուստաընկերութիւնը: «Արմնիւզ»-ը չի միջամտելու այդ թողարկումների խմբագրական քաղաքականութեանը», - նշեց «Արմնիւզ» հեռուստաընկերութեան գործադիր պրոդիւսեր Արտակ Ալեքսանեանը՝ տեղեկացնելով. - «Պայմանագիրը կնքուած է 1 տարով եւ կը երկարացուի կողմերի փոխադարձ համաձայնութեամբ»:

Հարցին, թէ մտավախութիւն չունի արդեօք, որ աւելի մեծ հեռուստաընկերութիւնը կը կլանի «Ա1+»-ին, Մեսրոպ Մովսէսեանը պատասխանեց. - «Ես ինձ չեմ համարում փոքր եւ կուլ տալու համար այդքան էլ յարմար չեմ, որովհետեւ փշոտ եմ: Մտավախութիւն, իհարկէ, կայ, որովհետեւ առջեւում քաղաքական պայքար է լինելու, առջեւում խնդիրներ են ծագելու: Բայց ես համոզուած եմ, որ քաղաքակիրթ յարաբերութիւնների մէջ դա կարելի է բացառել»:

ՎԱՋԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ ՊՆԴՈՒՄ Է ԻՐ ԱՌԱՋԱՐԿԸ

Ադրբեյջանցի սպայ, մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտահանումը Հանրային Խորհրդի նախագահ Վազգէն Մանուկեանը գնահատում է վայրագութիւն:

Նա այս ամենից չետոյ պարզապէս անհեթեթութիւն է համարում ԼՂ հիմնախորհրտի հարցի քննարկումը ադրբեյջանական կողմի հետ:

«Մի երկիր, որի ղեկավարութիւնը յայտարարում է, որ հայ սպանները յանցագործութիւն չի, այսինքն քնած մարդուն կացահարելը հերոսութիւն է, ոնց կարելի է այդ երկրի հետ շարունակել բանակցութիւններ Ղարաբաղի ճակատագրի մասին», - «Ա1+»-ին ասաց նա:

Պարոն Մանուկեանը մէկ անգամ եւս պնդեց Սերժ Սարգսեանին ներկայացրած իր 3 առա-

նա իր նախագահի հաւատում եմ»:

«Ա1+»-ի ղեկավարը, այդուհանդերձ, յաւելեց. - «Սակայն ես նաեւ նախապատրաստուած եմ այդ ամէն ինչին: Եւ ես պատրաստ եմ միշտ այսպիսի հարցերին պատասխանել»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք այս մասնակի վերադարձով աւարտուած է 10-ամեայ պայքարը, Մովսէսեանը արձագանքեց, թէ չնայած օրական 20 րոպէս եթերաժամի տրամադրմանը, «Ա1+»-ը եւ «Արմնիւզ»-ը դեռ «դատաւարութեան պրոցէսի մէջ են»:

Անցեալ տարի հեռարձակման կապուղու համար «Ա1+»-ը մրցակցում էր հենց «Արմնիւզ»-ի հետ:

Հարցին, թէ որքանով է համապատասխանում այժմ «Արմնիւզ»-ի վարած լրատուական քաղաքականութիւնը «Ա1+»-ի վարած քաղաքականութեանը, Մովսէսեանը արձագանքեց, թէ իր ղեկավարած հեռուստաընկերութեան քաղաքականութիւնը չի պատրաստուած փոխել, սա ընդամէնը բիզնես համագործակցութիւն է. - «Ես համարում եմ, որ մենք պէտք է եզրեր գտնենք ե՛ւ այս դիրքորոշումը ներկայացնելու, ե՛ւ այն դիրքորոշումը ներկայացնելու: Հենց այդ առումով մտել եմ այդ գործարքի մէջ, եւ պէտք է որ ստացուի: Մենք մեր իրաւունքների տէրն ենք, բայց միեւնոյն ժամանակ կարող ենք կատարել պատուեր նոյն «Արմնիւզ»-ի կողմից, որը մեծ սիրով մենք կատարում ենք»:

Չարկներից առաջինը՝ Հայաստանը պէտք է ճանաչի ԼՂ անկախութիւնը:

Նա խորհուրդ է տալիս այս հարցում, չսպասել Ռուսաստանի կամ Միացեալ Նահանգների ղեկավարների արձագանքներին:

Վազգէն Մանուկեանն անդրադարձաւ նաեւ 2013թ. Նախագահի ընտրութիւններին: Պարոն Մանուկեանը վստահեցնում է, որ իր անունը նախագահի թեկնածուների ցուցակում չենք տեսնի:

«Բացառուած է, որ ես իմ թեկնածութիւնը առաջադրեմ», - յայտարարեց նա:

Բայց հնարաւոր է համարում միասնական թեկնածուի պաշտպանութիւնը, «իսկ թէ ում կը պաշտպանի կուսակցութիւնը, դա կ'երեւայ ապագայում»:

ԼՈՒՐԵՐ

«ՍԱ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»

Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեանը Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանին արտաքինաքաղաքականության հարցերում տեսնում է նաև Հայաստանի արտգործնախարարությունից բացթողումը:

«Սա պարտություն է հետընթաց էր Հայաստանի արտաքին քաղաքականության համար», - «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում ասաց Ռիչարդ Կիրակոսեանը՝ նշելով, որ տեղի ունեցածը անակնկալ էր, եւ դեռ 3-4 շաբաթ առաջ նշաներ կային, որ կարող է նման բան տեղի ունենալ: Հետեւաբար Հայաստանի արտգործնախարարությունը պետք է նախապես կոնկրետ քայլեր ձեռնարկէր. - «Սա բացառապես Հայաստանում առկա խորը մի խնդիր՝ այն, որ ռազմավարություն մշակման եւ պլանավարման անհրաժեշտություն կայ»:

Ինչ վերաբերում է Հունգարիայի հետ դիւանագիտական յարաբերությունները կասեցնելու՝ նախագահ Սերժ Սարգսյանի որոշմանը, ապա, վերլուծաբանի համոզմամբ, դա ոչ միայն ճիշդ, այլև տրամաբանական քայլ էր, քանի որ «Բաքուն եւ Բուդապեշտն այլընտրանք չէին թողել»:

Հայաստանի արտգործնախարարը Փարիզում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպմանը յայտարարել էր, որ Ադրբեջանը «խոչընդոտում է համանախագահների՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը»:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն արդէն յայտարարել է, որ ակնկալում է Մինսկի խմբի եւ միւս միջազգային կառույցների արձագանքը հայ սպային կացնահարողին ազատ արձակելու փաստի շուրջ:

Ռիչարդ Կիրակոսեանը եւս կարծում է, որ հայ սպային կացնահարած ադրբեջանցու ազատ արձակումը լուրջ դիւանագիտական ճգնաժամ է առաջացրել եւ իր ազդեցությունը կարող է ունենալ բանակցային գործընթացի վրայ. - «Սա մի դիւանագիտական ճգնա-



Քաղաքական վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեան

ժամ է, որը Հայաստանին եւ Ադրբեջանին մղում է շատ լուրջ առճակատման, առճակատում, որն ամենալուրջն է վերջին շրջանում»:

Նրա համոզմամբ՝ Հայաստանն այժմ պետք է սպասի ադրբեջանական սադրանքի շուրջ միջազգային կառույցների, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի եւ Եւրամիության արձագանքին, եւ եթէ այդ արձագանքները բաւականաչափ կոչու չլինեն, ապա Հայաստանը պետք է վերանայի իր մասնակցությունը բանակցային գործընթացին, ինչպէս նաեւ՝ յարաբերությունները ՆԱՏՕ-ի եւ Եւրամիության հետ:

«Հայաստանը պետք է եւ կարող է քննարկել Մինսկի խմբի բանակցային գործընթացի դուրս գալու հնարավորությունը, Հայաստանը նաև պետք է զգուշացնի ՆԱՏՕ-ի եւ Եւրամիության հետ կապերը վերանայելու մասին՝ եթէ նրանք չարդարացնեն սպասումները», - ասում է Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի ղեկավարը:

Վերլուծաբանի խօսքով, ազատ արձակելով Սաֆարովին՝ Ադրբեջանը ցոյց տուեց, որ «սպառնալիք է ոչ միայն Հայաստանի կամ Լեռնային Ղարաբաղի, այլև ողջ տարածաշրջանի անվտանգության եւ կայունության համար»:

«Ադրբեջանը պետք է գին վճարի իր սադրանքի համար», - ասաց Կիրակոսեանը:

«ՕՔՍՖՈՐԴ ԱՆԱԼԻՏԻԿԱ»-Ն ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՍԻՐԻԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Բրիտանական «Օքսֆորդ Անալիտիկա» հետազոտական կենտրոնը հանդէս է եկել «Սիրիահայտության դժուարին դրությունը բացառապես է Սփիւռքի իրականություն» խորագրի ներքոյ հրատարակմամբ, որում փորձ է արվում Սիրիայում ծաւալուող իրադարձությունների համատեքստում գնահատել սիրիահայ համայնքի հետագայ ճակատագիրն ու հնարավոր զարգացումները:

Յօդուածն արձանագրում է, որ ամենամեծ քրիստոնէական համայնքը ձեւաւորած սիրիահայությունը ներկայումս յայտնուել է բաւականին խոցելի վիճակում, քանի որ հայերն այստեղ համարում եւ ընկալում են նախագահ Բաշար Ասադի ռեժիմի կողմնակիցներ ու աջակիցներ:

«Տեւական ժամանակ բարեկեցիկ կենսով ապրած հայերը, ովքեր վայելել են իշխանութեան բարեհաճութիւնը, այժմ խոցելի են սիրիական ընդդիմադիրների առջեւ: Մինչդեռ հայերի տնտեսական մեծ



ներուժն ու առեւտրային կապերը օգտակար կարող են լինել ցանկացած կառավարութեան համար», - ասուած է հրատարակման մէջ:

Յօդուածում սիրիահայութեան խնդիրները դիտարկուել են նաև Հայաստան - Սփիւռք յարաբերությունների համատեքստում: Արձանագրում է, մասնաւորապէս, որ սիրիական ճգնաժամը բացառապես դարձրեց Հայաստանի Հանրապետությունից սփիւռքահայութեան սպասելիքների չափազանցուածությունը:

Սփիւռքահայութիւնը, ըստ վերլուծական կենտրոնի, խիստ քննադատութեան է ենթարկում Հայաստանի իշխանութիւններին սիրիահայերի խնդիրներին յաւուր պատշաճի չարձագանքելու համար: «Սակայն այս ճգնաժամը

ՏԻՐՈՒՆԻԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՅՄԱՆՁՈՒՄ ԵՆ ԳԱՆԱԶԵԼ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ



Տիրունիականները Ետարուրի մէջ՝ գոհուած ազատամարտիկներու շիրիմներուն այցելութեան պահուն

Սեպտեմբեր 4-ին ՄԴՀԿ «Սարգիս Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը տարածեց յայտարարութիւնը, պահանջելով ճանաչել Արցախի անկախութիւնը:

«Հունգարիայի իշխանութիւնը, անտեսելով քաղաքակրթական, ժողովրդավարական եւ քրէաիրաւական չափորոշիչները, փաստօրէն ինքն իրենց դարձրեց յանցաւոր գործելակերպի, հակամարդկային վանդալիզմի խրախուսող: Եւ այս ամէնն այն դէպքում, երբ այդ երկիրը հանդիսանում է ժողովրդավարութեան, ազատութեան, մարդկային իրաւունքների պաշտպանութեան, օրինականութեան ջատագով՝ Եւրոպական Միութեան լիիրաւ անդամ:

«Կոչ ենք անում Հայաստանի իշխանութիւններին, Ադրբեջանի իշխանութեան աւելի ու աւելի սաստկացող հակահայկական քա-

ղաքականութեան մարտահրաւէրները ճկուն եւ ինքնավստահ գործելակերպով դիմակայելու համար սկսել Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչման գործընթացը», ասուած է յայտարարութեան մէջ:

ՄԴՀԿ Սարգիս Տիրունի ուսանողական միութիւնն Սեպտեմբեր 1-ին՝ Արցախի անկախութեան տօնին նուիրուած իր աւանդական այցելութիւնը կատարեց Եռաբլուր:

Տիրունիականները մէկական ծաղիկ դրեցին բոլոր գոհուած ազատամարտիկների շիրիմներն: Նրանց ուղեկցում էին Հնչակեան «Փարամազ» Չոկատի հրամանատար Վլոդիմիր Ազատեանը, «Ղարաբաղի պատերազմի վետերանների միութեան» ներկայացուցիչներ, ինչպէս նաև ԱՍԱԼԱ-ի անդամ Վազգէն Սիսեւեանն ու ՄԴՀԿ ատենապետ Գէորգ Պերկուպերկեանը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարտնախուճ էջ 1-էն

նի վարչութիւնը ողջունում է Հայաստանի իշխանութիւնների՝ Հունգարիայի հետ դիւանագիտական յարաբերությունների կասեցման որոշումը, ինչպէս նաև յոյս յայտնում, որ այսքանով գործընթացը չի աւարտուել, իսկ Սաֆարովը կը ստանայ իր արժանի պատիժը՝ լինի նա Բուդապեշտի բանտում, թէ Բաքուի իր տանը: Ադրբեջանական իշխանութիւնների՝ մարդասպանին իբրև հերոս ընդունելու եւ մեծարելու փաստն էլ ցոյց

է տալիս, թէ ինչ ֆաշիստական, հայատեաց ու մարդատեաց մթնոլորտ է տիրում մեր հարեւան երկրում:

ՄԴՀԿ-ն վստահ է, որ Սփիւռքի կազմակերպական կառույցներն իրենց ողջ ուժով եւ կարողութեամբ կը սկսեն պայքարը, որպէսզի ողջ աշխարհն արժանի գնահատական տա Հունգարիայի ուխտադրուծ, իսկ Ադրբեջանի էլ ֆաշիստական քաղաքականութեանը: Հատուցման պահը մօտ է:

ՄԴՀԿ Հայաստանի վարչութիւն

դիմագրաւելու համար պաշտօնական երեւանը շատ սահմանափակ հնարաւորութիւններ ունի», - նշում է «Օքսֆորդ Անալիկա»-ն՝ արձանագրելով, որ Հայաստանն իրականացնում է մի շարք միջոցառումներ, որոնք միտուած են սիրիահայութեան անվտանգութեան խնդիրների լուծմանը:

«Բացի Հայաստան մեկնել ցանկացող սիրիահայերի մուտքի եւ կացութեան խնդիրները հոգալուց, Հայաստանը նաև դիւանագիտական խողովակներով փորձում է սիրիահայութեան անվտանգութեան խնդիրներն արժարծել ինչպէս սիրիական իշխանութիւններ:

րի, այնպէս էլ ընդդիմադիրների հետ իր շփումներում: Այս ուղղութեամբ Հայաստանի իշխանութիւնների կատարած որոշ քայլեր երբեմն անտեսանելի են մնում», - ասուած է հրատարակման մէջ:

«Օքսֆորդ Անալիտիկա»-ն նաև նկատում է, որ կապուած ներհայաստանեան խնդիրների հետ՝ աշխատատեղերի բացակայութիւն, կոռուպցիա եւ այլն, Հայաստան եկող սիրիահայերը այս երկիրը յաճախ դիտարկում են իբրև ժամանակաւոր բնակատեղի, որտեղից հետագայում շատերը փորձ կ'անեն տեղափոխուել հիւսիսամերիկեան կամ եւրոպական երկրներ:

ՍԻՐԻԱՅԱՑԵՐԻ ԴՊՐՈՑԻՆ ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱԶԱԿՑԵԼՈՒ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայաստանում գտնուող սիրիահայ երեխաների կրթութեան կազմակերպման հարցերը քննարկելու նպատակով՝ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը հրաւիրել է աշխատանքային խորհրդակցութիւն, որին մասնակցում էին ՀՀ պիւլուքի նախարարութեան եւ Երեւանի քաղաքապետարանի, ինչպէս նաեւ սիրիահայ համայնքի ներկայացուցիչները:

Այս մասին տեղեկացնում են ՀՀ ԿԳ նախարարութեան լրատուական ծառայութիւնները:

Սիրիահայ համայնքի ներկայացուցիչների խնդրանքով քննարկուել է Երեւանի դպրոցներից մէկում, Սիրիայի կրթական ծրագրերին համապատասխան, նոր դպրոց հիմնելու հարցը: Քննարկուել են մի քանի տարբերակ դպրոցի տարածքի հետ կապուած:

Կրթական գործընթացի վերահսկողութիւնը կ'իրականացուի ՀՀ ԿԳ-ի կողմից նշանակուած պատասխանատուի կողմից, ով նախարարի առաջարկով պէտք է լինի սիրիահայ համայնքի ներկայացուցիչ: Դասագրքերի ու կրթական ծրագրերի խնդիրն առաջիկայում

կը լուծուի համայնքի կողմից, դրանք պէտք է բերուեն Սիրիայից, իսկ սիրիահայ երեխաներին կը դասաւանդեն այնտեղից եկած ուսուցիչները:

Սիրիահայերի դպրոցին ֆինանսապէս աջակցելու խնդիրը կը ստանձնի Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Հնչակեան Կուսակցութիւնը:

Խորհրդակցութեան ընթացքում նախարար Արմէն Աշոտեանին զեկուցել են, որ այս պահին Հայաստանի դպրոցներում սովորելու յայտ են ներկայացրել սիրիահայ 210 երեխաներ, որոնցից 107-ը՝ հիմնական, 103-ը՝ աւագ դպրոցում ընդգրկուելու համար:

Նկատի ունենալով, որ շատ երեխաներ Հայաստան են եկել առանց անձնական գործերի, ՀՀ ԿԳ նախարարը յանձնարարել է՝ անկախ հանգամանքներից՝ երեխաներին ընդունել դպրոց:

«Իրենց ցանկութեամբ եւ ընտրութեամբ՝ սիրիահայ երեխաները կարող են յաճախել նաեւ սովորական հայկական դպրոց եւ կրթութիւն ստանալ հայկական ծրագրերով», - նշել է ՀՀ ԿԳ նախարարը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

28 Օգոստոս 2012-ին, հիմնուելով «The Truth Paris» լրատուական գործակալութեան կայքէջին մէջ գետեղուած տեղեկութեան, Սուրիական հեռատեսիլի լրատու կայանը «Syria News Channel» լուր մը կը սփռէ թէ Դամասկոսի Զամալքա թաղամասին մէջ հայ ընտանիքի մը (6 անդամներէ բաղկացած) դաժան սպանութեան մասին: Լրատուութեան պարունակութիւնը խիստ մտահոգիչ էր: Անոր բովանդակութիւնն էր. «Դամասկոսի Զամալքա թաղամասին մէջ բազմութեան մը առջեւ դաժանօրէն կը սպանուի հայ ընտանիք մը: «Ազատ Բանակ» կոչեցեալ խմբաւորումը արդէն իսկ սպառնացած էր ծագումով հայ քաղաքացիներէն վրէժ լուծել»:

Դամասկոսի Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի եւ Դամասկոսահայութեան Շտապ Օգնութեան Մարմինը երկու օրեր շարունակ գաղութի տոմարներու տուեալներուն հիման վրայ փորձեցին ստուգել վերոնշեալ ընտանիքին ինքնութիւնը: Ըստ Դամասկոսահայութեան տոմարին պարզուեցաւ մանաւանդ, որ Դամասկոսի Զամալքա թաղամասին մէջ հայ ընտանիք մը չապրիր: Դամասկոսի Ազգ. Առաջնորդարանը իր հերթին հարցում կատարեց լրատուական հեռատեսիլի կայանին տնօրէնութեան, որ միայն նշեց, թէ կայանը հիմք ընդունած է «The Truth Paris» կայքէջին տուեալները: Ուստի, բարեբախտաբար, հայ ընտանիքի սպանութեան տեղեկութիւնը

կարելի չէղաւ հաստատել եւ կը հերքուի այն:

Ի պատասխան այս լրատուութեան Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Արմաշ Եպս. Նալպանեանը գրաւոր նամակով մը բողոք ներկայացուց Սուրիական հեռատեսիլի լրատու կայանի տնօրէնին: Միաժամանակ Շաբաթ 1 Սեպտեմբեր 2012-ին, յատուկ ժամադրութեամբ այցելութիւն տուաւ Սուրիոյ Լրատուութեան Նախարար Տիար Ումրան Ալ-Չուռուպիին եւ անձնապէս բողոք ներկայացուց յանուն Սուրիահայութեան: Հանդիպման ժամանակ Սրբազան Հայրը Նախարարին փոխանցեց Սուրիահայութեան վրդովմունքը, ցաւ յայտնելով որ այսպիսի լրատուութիւն մը կը հրապարակուի պաշտօնական կայանէ մը, հիմնուելով ոչ պաշտօնական աղբիւրի մը վրայ եւ առանց ստուգելու անոր ճշմարտացիութիւնը: Նախարար Ալ Չուռուպին իր հասկացողութիւնը յայտնեց կատարուածին համար եւ ըսաւ թէ սխալը արդէն իսկ կասեցուած է եւ տուեալ աշխատակիցը պատասխանատուութեան պիտի հրաւիրուի: Սրբազան Հայրը բարեացակամ ընդունելութեան համար շնորհակալութիւն յայտնեց եւ ապա նախարարին հետ քննարկեց յառաջիկայ համագործակցութեան կարելիութիւնները:

Դիւան Դամասկոսի Ազգ. Առաջնորդարանի Դամասկոս, 2 Սեպտեմբեր 2012

ՀԱՍՆԴՐԱՆՈՒՐ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

Շարունակուած էջ 1-էն

կելու Ատրպէյճանում դատավճռի իրականացման շարունակմանը: Ուստի, Հունգարիայի կառավարութիւնը պէտք է կանխատեսէր Ռամիլ Սահիբ Սաֆարովի փոխանցման վերաբերեալ կայացրած իր որոշման հետեւանքները, որի արդիւնքում արդիւնաւէտ կերպով դադարեցուց սպանութիւնը կատարած յանցագործի նկատմամբ արդարադատութեան իրականացումը»:

Հունգարիոյ արտաքին գործոց նախարարութեան պետական քարտուղար Ջոլիթ Նեմետ, Պուտայիչտի մէջ Ատրպէյճանի դեսպան Վիլյայաթ Կուլիբեկին հրաւիրեց նախարարութիւն եւ տեղեկացուց, որ Հունգարիան անընդունելի կը համարէ հունգարական դատարանի կողմէ ցմահ դատապարտուած ատրպէյճանցի ոճրագործ Ռամիլ Սաֆարովին ներման արժանացնելու փաստը: Հունգարացի պատասխանատուն նշեց, թէ Ատրպէյճանի կողմէ ձեռնարկուած քայլերը կը հակասեն միջազգային իրաւունքի չափանիշներուն եւ նոյնինքն այդ երկրի կողմէ աւելի կանուխ տրուած պաշտօնական խոստումներուն, ըստ որոնց, Սաֆարովը Ատրպէյճանի մէջ կը շարունակէ կրել պատիժը:

Միաժամանակ, Հունգարիայի արտաքին գործոց եւ արդարադատութեան նախարարութիւնները միացեալ յայտարարութեան մը մէջ նշեցին, որ Հունգարիան, հետեւելով գործող կանոններուն, գործած է թափանցիկ կերպով: «Հունգարիան իւրաքանչիւր պետութեան հետ յարաբերութիւններու մէջ հաւատարիմ է միջազգային իրաւունքի կանոններուն եւ նոյնը կ'ակնկալէ միջազգային գործընկերներէն», - ըստուած էր յայտարարութեան մէջ, նկատել տալով, որ Հունգարիան խորին յարգանք կը տածէ քրիստոնէական Հայաստանի եւ հայ ժողովուրդի մշակոյթի ու աւանդոյթներուն նկատմամբ:

Յայտարարութեան մէջ նաեւ արտասանք կը յայտնուէր Հունգարիոյ հետ յարաբերութիւնները իզեւելու Հայաստանի որոշումի մասին:

Հայ սպայ Գուրգէն Մարգարեանը քննարկեց պահուել կացինահարած ատրպէյճանցի ոճրագործ Ռամիլ Սաֆարովի ներման արժանացումն ու Հունգարիոյ կողմէ Ատրպէյճանի արտաքանձնումը շարունակեցին քննադատութեան ենթարկուելի շարք մը պետութիւններու ու կառույցներու կողմէ:

Եւրոպական միութեան արտաքին գործոց նախարար Քեթրին էշթըն եւ միութեան ընդլայնման եւ եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան հարցերով յանձնակատար Շթեֆան Ֆիւլէ անհանգստութիւն յայտնեցին Ատրպէյճանի կողմէ մարդասպան Սաֆարովին ներում շնորհելու փաստին կապակցութեամբ: Անոնք յայտարարութեամբ մը, նաեւ կոչ ուղղեցին Ատրպէյճանին եւ Հայաստանին՝ ցուցաբերելու զսպուածութիւն՝ որպէսզի կանխուի իրավիճակի շրկացումը:

Ֆրանսա մտահոգութիւն յայտնեց Ատրպէյճանի իշխանութիւններուն կողմէ Ռամիլ Սաֆարովին ներման արժանացնելու փաստին առնչութեամբ: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան տարածած յայտարարութիւնը նշեց, որ Ֆրանսան, ինչպէս Միսսկի խումբի միւս համանախագահ

երկիրները կը կարծէ, որ այդ որոշումը կրնայ լրջօրէն վնասել Լեւնային Ղարաբաղի հակամարտութեան բանակցային ջանքերուն եւ հակամարտ կողմերուն միջեւ վաստահոլութեան միջոցով ստեղծման:

Իր կարգին Ռուսաստան, իբրեւ Միսսկի խումբի համանախագահ երկիր, խոր մտահոգութիւն յայտնեց առանձնակի դաժանութեամբ հայ սպային սպանած ոճրագործին Պաքուի մէջ ներման արժանացման եւ անոր Ատրպէյճանի իշխանութիւններուն արտաքանձնելու Հունգարիոյ քայլի մասին: Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Ալեքսանտր Լուքաչեւիչը կարծիք յայտնեց, որ ատրպէյճանական եւ հունգարական կողմերուն գործողութիւնները կը հակասեն այն ջանքերուն, որոնք միջազգային մակարդակի վրայ եւ առաջին հերթին ԵԱՀԿ Միսսկի խումբի աշխատանքին շնորհիւ համաձայնեցուած են եւ ուղղուած՝ տարածաշրջանին մէջ լարուածութեան թուլացման:

Միսսկի խումբի համանախագահները՝ ամերիկացի Ռուպերթ Պրատքէ, ռուս իկոր Փոփով եւ ժաք Ֆոր, որոնք Փարիզի մէջ հանդիպումներ ունեցան Հայաստանի ու Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներուն հետ, մտահոգութիւն ու հրաշփափութիւն յայտնեցին Սաֆարովի ներման եւ յանցագործութիւնը փառաբանելու կեցուածքներուն առնչութեամբ, ինչ որ, ըստ համանախագահներուն, բացասաբար կ'ազդէ բանակցային գործընթացի եւ կողմերու միջեւ վաստահոլութիւն հաստատման վրայ:

Միւս կողմէ, Հունգարիոյ կառավարութիւնը հերքեց Սաֆարովի արտաքանձնման հարցով Պուտայիչտի եւ Պաքուի միջեւ տնտեսական գործարքի մասին լուրերը: Կառավարութեան համաձայն, Հունգարիան Սաֆարովի արտաքանձնման հետ կապուած վախճանու ոչինչ չունի, որովհետեւ ամբողջ գործընթացը իրականացուած է միջազգային կանոններու համաձայն:

Ոճրագործ Սաֆարովի ազատ արձակումը քննադատեց նաեւ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը՝ նախագահ Պարաք Օպամայի զխաւորութեամբ:

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամ Ատամ Շիֆ խոր մտահոգութիւն յայտնեց հայ սպայ Գուրգէն Մարգարեանին սպանման ատրպէյճանցի ոճրագործ Ռամիլ Սաֆարովի արտաքանձնման եւ ներումի արժանացման առնչութեամբ: «Հունգարիան, ուր Սաֆարովը դատապարտուած էր ցմահ ազատազրկման, եւ Ատրպէյճանը պարտաւոր են միջազգային հանրութեան բացատրութիւն տալ արդարադատութեան նկատմամբ այս սարսափելի ոտնձգութեան համար», ըսաւ Ատամ Շիֆ, ընդգծելով, որ այս անընդունելի լուծում է խոստովանուած ոճրագործութեան համար:

Քոնկրէսականներ Պրէտ Շըրմըն, Ֆրենք Փալոնն եւ Հաուըրտ Պերմըն եւս դատապարտեցին Ատրպէյճանի եւ Հունգարիոյ իշխանութիւններուն յանցաւոր գործարքը: Այս առթիւ Հայութեան կողմէ բողոքի ցուցերը կը շարունակուէին Հայաստանի եւ արտասահմանի մէջ՝ Հունգարիոյ դիւանագիտական ներկայացուցչութիւններուն առջեւ:

«ԻՍԱՀԱԿ» ՄՐՐԻԿԵՆ ՎՆԱՍՈՒԱԾ ԵՆ ՆԱԵՒ ՀԱՅԵՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Անցեալ շաբթուայ ընթացքին «Իսահակ» ջրամբրիկը հարուածեց Լուիզիանա նահանգը, իր ճամբուն վրայ գործելով մեծ աւերներ: Ամենէն աւելի վնասուած շրջաններէն մէկն էր, Լափլաք քաղաքը, որ կը գտնուէի Նիւ Օրլիանցի եւ Պաթոն Ռուփի միջեւ: Շրջանին մէջ ջրերի բարձրութիւնը հասած է մինչեւ 9 ոտք բարձրութեան: Քաղաքին մէջ կը բնակին 5 հայ ընտանիքներ, որոնց բնակարանները մեծ վնասներ կրած են: Պաթոն Ռուփի Հայկական Ս. Կարապետ եկեղեցին կազմակերպած է

Շաբ.բ էջ 8

ՊԵՆԵՏԵԿԺԿՄՈՆԵ «ՄԻՆՉԵԻ ԵՐԷԿ ԵՍ ՇԱՏ ԳՊԱՐՑ ԷԻ, ՈՐ ԶՈՒՆԳԱՐԱՑԻ ԵՄ»

Հունգարիայի որոշումը՝ հայ սպայ Գուրգեն Մարգարեանին դաժանաբար սպանած Ռամիլ Սաֆարովին արտալիցադատելու մասին, չէր կարող լայն եւ միանշանակ բացասական արձագանգ չզգտնել հայերի շրջանում:

Այս տեղեկատուութեան տարածումից անմիջապէս յետոյ բողոքի ինքնաբուխ ակցիա տեղի ունեցաւ Հունգարիայի հիւպատոսարանի մօտ, իսկ բոլորի խօսակցութեան՝ աւելի շուտ վրդովմունքի թիւ մէկ թեման դարձան Սաֆարովի ու Հունգարիան: Ի դէպ, հունգարական իշխանութիւնները որոշումը դժգոհութիւն է առաջացրել, ոչ միայն հայերի, այլ հենց հունգարացիների շրջանում:



Հունգարացի հայազետ Բենեդեկ Ժիզսոնի HayNews.am-ի հետ հարցազրոյցում պատմեց, որ անմիջապէս այս նորութեան տարածումից յետոյ հունգարացիները «ֆէյսպուք»-ում սկսել են իրենց դժգոհութիւնը յայտնել կատարուածի առնչութեամբ:

«Մինչեւ երէկ ես շատ հպարտ էի, որ հունգարացի եմ, շատ հպարտ, որ մեր երկրում դատարարութիւնն արդար է: Սաֆարովի պատիժը արդարացի էր, քանի որ համապատասխանում էր արարքին: Իսկ երէկուանից յետոյ ես նոյնիսկ ամաչում եմ: Ես ծնունդով հունգարացի եմ, բայց այսօրուանից ինձ համարում եմ հայ: Բայց պէտք է նշեմ, որ Հունգարիայի կառավարութեան որոշումը չի համապատասխանում Հունգարիայի ժողովրդի կարծիքին, որովհետեւ Հունգարիայի ժողովուրդը միշտ համարում էր, համարում է եւ ապագայում էլ համարելու է հայ ժողովրդին որպէս իր բարեկամ: Մեր ժողովուրդների շփումները 1000 տարուայ պատմութիւն ունեն: Հունգարացի թագաւոր Պիլա 4-ը հող է նուիրել հայերին այն ժամանակուայ մայրաքաղաք Էսթերգոմում: Յետոյ Հունգարիայի այլ իշխաններ արտօնութիւններ են տուել հայերին, ազնուական տիտղոսներ: Բացի այս, հայերը պաշարել են հունգարացիների կողքին՝ հակաաւստրիական ազատագրական պայքարի ժամանակ, իրենց կեանքն են տուել Հունգարիայի համար: Հայ-հունգարական բարեկամութիւնը չի սահմանափակուում սիրուն խօսքերով: Երկու ժողովուրդներն ունեն շատ ընդհանրութիւններ: Պատմութիւնը որ թերթում ենք, տեսնում ենք, որ նոյն թուրքերը քանդել են մեր եկեղեցիները, յուշարձանները: Այն մշակութային արժէքները, որ կան ասե՛ք իտալիացում, եղել է նոյն Հունգարիայում, բայց թուրքերի կողմից ոչնչացուել են: Հիմա, որ երէկուայ անբարոյական արարքի հետեւանքով Հայաստանի եւ Հունգարիայի դիւանագիտական յարաբերութիւնները խզուել են, դա չի նշանակում, որ այդ երկու ժողովուրդների կապերն են խզուել: Այդ փոխադարձաբար ջերմ յարաբերութիւնն երբ չեն կարող խզուել:

«Ու՛մ «քանքերով» է ընդունուել այս որոշումը:

«Ասեմ, որ այս որոշումը չի արդարացնում ոչ միայն Հունգարիայի ժողովուրդն, այլեւ իշխող կուլիցիան: Հունգարիայի իշխող կուսակցական դաշինքը հայամէջտ

է: Օրինակ 2011-ին ընդդիմադիր մի կուսակցութիւն, որն իմ կարծիքով կաշառք էր վերցրել Ատրպէյճանի կառավարութիւնից, ուզում էր Հունգարիայի խորհրդարան անցկացնել մի օրինագիծ, որը դատապարտում էր «Խոջալուի դէպքերը»: Իշխող կուսակցութիւնը խոչընդոտել է այս օրինագծի անգամ քննարկումը, այսինքն՝ նոյնիսկ խորհրդարանի օրակարգ չի մտել: Այդ որոշումը, իմ կարծիքով, մեր արագործնախարարութեան մի քանի յիմար ղեկավարների որոշումն է, որը չզիտեմ ոնց կարողացան անցկացնել կառավարութիւնում:

«Հայաստանի իշխանութիւնների կողմից Հունգարիայի հետ դիւանագիտական կապերը խզելու որոշումն, ըստ ձեզ, արդարացի» էր:

«Այդ որոշումը շատ անապասելի էր ու շատ լուրջ արարք էր եւ դրան պէտք էր լուրջ արձագանգ: Կարծում եմ, որ եղաւ ճիշտ արձագանգ, բայց պէտք է նշեմ՝ այն, որ դիւանագիտական կապերը հիմա խզուել են, դա չի նշանակում, որ ժողովուրդների կապն է խզուել ու այդ կապերը չեն շարունակուելու: Հայ-հունգարական յարաբերութիւնները նոր ինտենսիւթեան են հասել ու սա դեռ չի նշանակում, որ համագործակցութիւնը դադարում է: Խորհրդարանների միջեւ կան խորը կապեր, ուստի կարծում եմ, նաեւ Հունգարիայի խորհրդարանը պէտք է ամէն ինչ անի, որ վերականգնուի դիւանագիտական կապը: Բոլոր հայերին ասեմ, որ հունգար ժողովուրդն այս պահին իր կողքին է ու դատապարտում է այս արարքը: Ես մի քանի անգամ արդէն ասել եմ ու հիմա էլ Հունգարիայի ողջ ժողովրդի անունից ուզում եմ ներողութիւն խնդրել հայերից: Հունգարիայի նախկին արագործնախարարն արդէն ներողութիւն խնդրել է, մնում է մեր իշխանութիւնը եւս դա անի, ու շտիկուի յառաջացած դիւանագիտական ճգնաժամը: Լիովին հասկանում եմ հայ ժողովրդի մէջ վրդովմունքը, հասկանում եմ ինչու են «լօլիկապատել» հիւպատոսարանի շէնքը: Ես երէկ տարբեր տեղեր եղայ, տարբեր մարդկանց հետ շփուեցի ու նկատեցի, որ հայերի ամենայնաճախ կիրառուող բառը դարձել է «Հունգարիան», բացասական իմաստով ի հարկէ:

«Ասում եմ, Ատրպէյճանը 3 միլիարդ դոլար է ծախսել Սաֆարովի

ՎՐԱՍԱՆԻ ԶԱՅԵՐՈՒ ՑՈՅՑԸ ՍԱՖԱՐՈՎԻ ԱՐՏԱԳԱՆՄԱՆ ԴԵՄ



Սեպտեմբերի 1ին Վրաստանի մայրաքաղաքի Թբիլիսիի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու «Հայարթուն» մշակութային կեդրոնի եւ այլ կազմակերպութիւններու մասնակցութեամբ տեղի ունեցաւ բողոքի ցոյց քաղաքի հունգարական դեսպանատան դիմաց:

Ցուցարարներն իրենց բողոքն ու ցասումը կ'արտայայտէին Հունգարիոյ իշխանութիւններուն դէմ, որոնք Օգոստոսի 31ին արտալիցադատեցին ատրպէյճանցի Ռամիլ Սաֆարովը: Ան Փետրուար 19ին, 2004, կացինով սպանած էր հայկական բանակի սպաներէն Գուրգեն Մարգարեանը: Այս առթիւ ցուցարարները բողոքագիր մը փոխանցեցին վրաստանի մօտ Հունգարիոյ դեսպան Շանտոր Սապոսին:

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ ԼՈՆՏՈՆԻ ԶՈՒՆԳԱՐԻՈՅ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ԴԻՄԱՑ

Բրիտանական մայրաքաղաքի հայ զաղութի տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչները բողոքի ցոյց մը կատարեցին Լոնտոնի մէջ: Ցուցարարները բուռն կերպով բողոքեցին ատրպէյճանցի ոճրագործ Ռամիլ Սաֆարովի ազատ արձակման դէմ: Անոնք դատապարտեցին հունգար իշխանութիւններու այս պախարակելի արարքը, միջազգային կառույցներէն պահանջեցին դատապարտել այս անընդունելի արարքը, որ համագոր է կրկնակի ոճրագործութեան:

ՏՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ ԶԱՅԵՐՈՒ ՑՈՅՑԸ

Ռուսական Տոնի Ռոստով քաղաքի հայերը բողոքի ցոյց մը կատարեցին Հունգարիոյ ներկայացուցչութեան դիմաց: Արդարեւ, անոնք իրենց բողոքն արտայայտեցին Հունգարիոյ իշխանութիւններուն, որոնք օրեր առաջ, արտալիցադատեցին հայ սպային կացինով սպանած Ռամիլ Սաֆարովին: Ան Ատրպէյճան հասնելու պէս ազատ արձակուած էր եւ հազարապետի կոչում ստացած:



Ռոստովի հայերը իրենց կազմակերպած ցոյցի ընթացքին պարզած էին կարգախօսներ, որոնց վրայ գրուած էին «Հունգարիա, ուղղէ սխալը», «Հայ ժողովուրդը չի կրնար այս մէկը ներել», «Կը պահանջենք Ռամիլ Սաֆարովի ձերբակալումը»:

ԶՈՐԴԱՆԳԻՍ ՍՈՒՐԻՈՅ ՍԷՋ ԶՈՐՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԶԱՄԱՐ

Անցեալ Կիրակի, Սեպտեմբերի 2ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ պատարագէն յետոյ, Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի նախագահութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, Սուրբոյ մէջ ռազմական գործողութիւններու հետեւանքով զոհուած հայերու եւ հաւատակիցներու համար:

Ս. Պատարագին եւ հոգեհանգիստին ներկայ էին Հայաստանի մէջ Սուրբոյ գործերու ժամանակաւոր հաւատարմատար լիազօր նախարար Մամուկ Ալ Հարիրի ինչպէս նաեւ սուրիահայ համայնքի ներկայացուցիչներ ու ուխտաւորներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջ եկեղեցական յարաբերութիւններու բաժնի տնօրէն Տ. Յովակիմ եպս. Մանուկեանը ցաւ յայտնելով Սուրբոյ մէջ շարունակուող հակամարտութեան առթիւ յանուն Ս. Էջմիածնի միաբանութեան ցաւակցութիւններ յայտնեց հայ համայնքի զոհուածներու ընտանիքներուն եւ հարազատներուն:

Հոգեհանգիստէն ետք Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց Հայաստանի Սուրբոյ գործերու հաւատարմատարին: Զրոյցի ընթացքին Վեհափառ Հայրապետը իր մտահոգութիւններն արտայայտելով Սուրբոյ իրավիճակի մասին, յոյս յայտնեց որ Սուրբոյ ժողովուրդը կը յղթահարէ ներկայի դժուարութիւնները եւ կը վերադառնայ իր կեանքի բնականոն ընթացքին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ ԱՆԳԱՐԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ ՏԵՂԵԿԱԳՐՈՂՆԵՐ՝ Տ. ՎՐԹԱՆԵՍ ԱԻԱԳ ՔՅՆՅ. ԳԱԼԱՅԵԱՆ ԵՒ ԷՏՈՒՐՈՏ ԱԼԵՔՍԱՆՏՐ

«Մասիս» շաբաթաթերթի Յուլիսի չափորդական 26 եւ 27 թիւերու մէջ լոյս տեսաւ Հնչակեան կուսակցութեան ղեկավարներէն Ալեքսիս Տէմիրճեանի հետ հարցազրոյցը, ուր մանրամասն կը պատմէ հայ երեք աւանդական կուսակցութիւններու ղեկավարներու եւ թուրքիոյ Արտաքին գործոց նախարարի հետ հանդիպում մը: Պատմութեան համար ուսանելի եւ ընդհանրապէս հետաքրքրական տեղեկագիր մըն է, որ իւրաքանչիւր հայ, որ Հայ Դատով կը հետաքրքրուի, պէտք է կարդայ:

Այս ընթերցումէն ետք է որ մեր մէջ եւս արթնցաւ տեղեկացնել այն միւս հանդիպումի մասին, որ տեղի ունեցաւ 26 տարի ետք ԱՄՆ-ի մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ:

2003-ի Յուլիսի կէսերուն հանդիպում մը տեղի ունեցաւ թուրքիոյ դեպան էջվէթ Թէզքանի հետ, որ նաեւ Արտաքին գործոց նախարարութեան հետախուզութեանց եւ փորձառական ուսումնասիրութեանց բաժանմունքին ղեկավարն էր: Իր իսկ նախաձեռնութեամբ կայացած այս հանդիպման ներկայ էին Ուաշինկթընի հայ գաղութի մի քանի երեւելի անձինք եւ ինքս՝ իբրեւ հովիւ եկեղեցու: Միւսներն էին Պրն. Էտուրտ Ալէքսանտր, որ տարիներու դիւանագիտական փորձառութիւն ունէր իբրեւ Ամերիկայի Ձայնի հայկական բաժնի վարիչ-անօրէն եւ յետոյ Արտաքին գործոց նախարարութեան մէջ (State Department) իբրեւ դիւանագէտ՝ գանազան պաշտօններ զբաղեցուցած: Ներկայ էին նաեւ այժմ հանգուցեալ Պրն. Վարդգէս Պալեանը եւ իր նոյնքան աքթիւ տիկինը՝ Ռիթա Պալեանը: Երկուքն ալ թէ՛ եկեղեցու շրջանակէն ներս եւ թէ՛ ՀԲԸ Միութեան մէջ առաջնորդող եւ ղեկավար դիրքերու վրայ գտնուած են տարիներու ընթացքին: Վերջիններս ազնւօրէն տրամադրեցին իրենց բնակարանը այս հանդիպումին համար: Ասիկա առաջին անգամը չէր, որ Պալեաններու բնակարանը կը գործածուէր նման հանդիպումներու համար: ՀՀ դեսպանատան հաստատուելէն առաջ անոնց բնակարանը եղած էր անպաշտօն վայրը ժողովներու եւ խորհրդակցութեանց՝ դեսպաններու, Գոնկրէսի անդամներու եւ պետական պատուիրակութիւններու հետ, այստեղէն կամ Հայաստանէն: Թէ՛ իրենց սրտաբաց հիւրասիրութիւնը եւ թէ՛ իրենց բնակարանի մէջ շքեղ եւ առատօրէն



Էջվէթ Թէզքան

ցուցադրուած հայ մշակոյթը ներկայացնող արուեստի նմուշները իրենց բնակարանը դարձուցած էին ցանկալի վայր մը այս տեսակ ժողովներու:

Ժողովը սկսաւ դեսպան Թէզքանի այն տեղեկութեամբ, որ իր իսկ առաջարկն էր Սփիւռքի հայ գաղութի ղէմքերու հետ հանդիպում ունենալ՝ ճշդելու անոնց մտայնութիւնը հայ-թուրքական յարաբերութիւններու առնչութեամբ, եւ այս առաջարկը ընդունուած էր թուրք կառավարութեան կողմէ, եւ թէ՛ այն կը վայելէր լրիւ աջակցութիւն: Ընդգծեց նաեւ այն, որ իր կառավարութեան դիրքը արդիւնք է անկախ Հայաստանի մը հաստատումին եւ որ իսթան հանդիսացած է թուրքիոյ, որ առնէ ամէն քայլ ղէպի յարաբերութեան բարելաւում, բայց ամերիկահայոց պնդումը, առաջին հերթին Յեղասպանութեան ճանաչումը այս մերձեցման առաջընթացին արգելք կը հանդիսանայ:

Ան նշեց սակայն, որ երկխօսութիւնները թուրք եւ հայ պաշտօնատարներու միջեւ կը շարունակուին իրենց պատկան մայրաքաղաքներու մէջ եւ նշան են երկուստէք ցուցադրուած բարի կամեցողութեան:

Նոյնպէս եւ հայկական կողմէ յստակօրէն ըսուեցաւ, որ ոչ մէկ հայ գաղութ ԱՄՆ-ի մէջ ի զօրու է խօսիլ այն հարցերու մասին, որոնք յստակօրէն հայ-թուրքական երկու պետութեանց բանակցութեանց ծիրին մէջ են:

Այդքանը ըսելէ ետք մեր խումբը վերահաստատեց այն, որ Սփիւռքի հայութիւնը թուրքիան պատասխանատու կը նկատէ այն բոլոր պատահարներու համար, որ տեղի

ունեցած են 1800-1923 թթ. Ժամանակամիջոցին, մասնաւորաբար՝ գանդուածային աքսորներու եւ սպանութեանց համար, որոնք հանգեցան Յեղասպանութեան:

Աւելին՝ ըսուեցաւ, որ կան տակաւին հիմնական ուրիշ հարցեր, որոնք պէտք է բերուին սեղանին: Անոնցմէ ոչ նուազագոյն կարեւորութիւն ունեցողն է Լոզանի Դաշնագրի տրամադրած միջոցառումները՝ փոքրամասնութեանց իրաւունքներու պահպանութեան առնչութեամբ:

Դեսպանին ուշադրութեան յանձնուեցաւ նաեւ այն, որ նոյնինքն այս ժողովը տեղի կ'ունենար հազարաւոր մղոններով հեռու մեր պապենական հողերէն եւ տուներէն՝ իբրեւ արդիւնք եւ հետեւանք Օսմանեան եւ Երիտթուրք կառավարութեանց որդեգրած քաղաքականութեան: Ասիկա դուռը բացաւ յիշեցնելու դեսպան Թէզքանին ներկայներէն մէկուն անհատական ընտանեկան ողիսականները: Անոնցմէ մէկը սկսաւ կուտինայէն (Քութահիա), ուրկէ Պալեան մեծ հայրը եւ ընտանիքի միւս անդամները ենթարկուեցան «տեղափոխութեան» ղէպի Քիրքուք (այսօրուան Հիւսիսային Իրաք) եւ անկէ՝ ղէպի Տըրաա, Սիւրիա, Դամասկոսի հարաւը: Անկէ վերջ, քաջալերուած Ֆրանսիացիներէն, հայերը վերադարձան Ատանա՝ դարձեալ խաբուելու համար եւ ենթարկուելու երկրորդ աքսորին՝ այս անգամ ներկայ թուրքիոյ «հայրը» նկատուած Մուսթաֆա Քէմալի ուժերու կողմէ:

«Պարոն դեսպան, այստեղ Դուք ի ներկայութեան էք այն վերապրողներուն, որոնք զոհն են լուր կառավարութեանց Յեղասպանութեան քաղաքականութեան», ըսուեցաւ իրեն: Բարիկամեցողութեամբ բանակցութիւններ սկսելու համար կամ նոյնիսկ պարզ երկխօսութեան համար պէտք ունինք վստահութիւն ներշնչող քայլերու մեր սկսելէն իսկ առաջ: Եւ պէտք չունինք երկարաձգուած դիւանագիտական բանակցութեանց, որովհետեւ այդ ըլլալիքները թուրք կառավարութեան տրամադրութեան տակ են: Գրիչի մէկ շարժումով կարելի է մասնաւորաբար սկսիլ Լոզանի Դաշնագրի տրամադրութիւններով, զորս թուրքիան ստորագրած է: Սկսած ըլլալու համար յիշեցնենք մասնաւորաբար այն պարտաւորութիւնը, որով թուրք կառավարութիւնը պէտք է դադարեցնէ հալածելէ եւ վերացնէ պիւրոքրաթիք արգելքները, որոնք կը դիմագրաւեն հայ եկեղեցին եւ հայ դպրոցները թուրքիոյ տարածքին:

Էտուրըտ ձէրէճեան Սուրիոյ մօտ Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպանն էր 1988-էն 1991: Ան նաեւ ծառայած է որպէս նախագահ Ռոնալտ Ռեյկընի յատուկ օգնական եւ Սպիտակ Տան արտաքին գործոց յարաբերութիւններու լրատուական քարտուղարութեան օգնական՝ 1985-1986 թուականներուն: 1994-ին կառավարական պաշտօններէ հանգստեան կոչուելէ ետք, ձէրէճեան հիմնադիր տնօրէնը հանդիսացաւ Ռայս Համալսարանի ձէյմս Ա. Պէյքըր Գ. Ինստիտուտի Հանրային Քաղաքականութեան ամպիոնին: Իր գիրքը՝ "Danger and Opportunity: An Ameri-

ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ

**ՅՈՒՆԵՍԿՈՒՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Յարգելի հայրենակիցներ, 2012 թուականը գուգադիպում է Սփիւոֆի միակ երգիծաբանադատական ամսագրի՝ «Քաջ Նազար»ի 40-ամեակին: Այս առիթով կազմուել է համագաղութային միջանկյալ միջոցառում, որի մէջ ներգրաւուած են հասարակական, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններ, միութիւններ եւ մեր համայնքում գործող մտաւորական եւ հասարակական դէմքեր: Հանդիսութիւնը տեղի ունենալու կիրակի, Սեպտ. 30-ին երեկոցեան ժամը 6:00-ին, Glendale High School-ի սրահում, 1400 E. Broadway, Glendale:

Վստահ եմք, որ «Քաջ Նազար»ին նիւթապէս եւ բարոյապէս գորավիզ կանգնող հազարաւոր ընթերցողներ, բարեկամներ ու հովանաւորներ իրենց անվերապահ ներկայութեամբ պիտի փառաբանեն 40-ամեակի սոյն Յոյնիմական հանդիսութիւնը, ուր «Քաջ Նազար»ի մեծարումով պիտի գնահատուի, ընդհանրապէս հայ թերթը, գիր ու գրականութիւնն ու մշակոյթը:

Բոլոր նրանք՝ մամուլ, կազմակերպութիւն, աշխարհիկ, կրօնական հաստատութիւն թէ անհատ մտաւորական կը ցանկանան այս առիթ իրենց շնորհակարարական եւ սրտի խօսքը հնչեցնել, այն կարող են յղել մինչեւ Սեպտեմբերի 18, նամակատան միջոցով՝ Kach Nazar, P. O. Box 250038, Glendale CA 91225 USA կամ e-mail:kachnaar 1970@gmail.com. Fax 818-246-7467, Tel. 818-239-6880, 818-606-2070:

Յոյնիմական այս հանդիսութիւնը առիթ պիտի ծառայի մեր սրտագին ու անկեղծ շնորհակալութիւններ յայտնելու «Քաջ Նազար»ի հազարաւոր ընթերցողներին, որոնք սկսելով Գալիֆորնիայից, սփռուած են Ամերիկայով մէկ եւ որոնց յարատեւ փառաբանումն ու աջակցութեան շնորհիւ կարելի դարձաւ աւելի քան 40 տարի շարունակ հրատարակել «Քաջ Նազար»ը, յաղթահարելով անթիւ-անհամար դժուարութիւններ ու խոչընդոտներ:

Հայրենակիցներ, խմբագիր, հրատարակիչ ու թերթի վարիչ ըլլալու կարիքը չկայ, որպէսզի վերահասու լինենք այն բոլոր դժուարութիւններին մասին, որոնց դէմ կուրծք է տալիս, ամենօրեայ պայքար է մղում հայ մամուլի չարքաշ սպասաւորը: Նա, յանուն ազգայնական ման անդուլ պայքար է մղում հայ բառն ու բանը կենդանի պահելու համար: Տիւ եւ գիշեր հնչեցնելու է մեր գոյութեան սիւնքն ու ամրոցները կազմող ազգային-մշակութային-հոգեկան արժէքները կենսունակ պահելու անհրաժեշտութիւնը: Նա, որպէս անլուրի զանգակատուն, մշտապէս ղողանջում է մեր հաւատական ինքնութիւնը առողջ ու անսասան պահելով, մեր գոյերը աշխոյժ, ամուր եւ անխափան շարունակելու անհրաժեշտութիւնը այս հիւրընկալ ակտիւ վրայ, մինչեւ այն օրհնելու երջանիկ օրը, երբ թափառական մեր ժողովուրդը վերջնականապէս կը համախմբուի Արարտի փէշերուն:

Արդ, սիրելիներ, եկէ՛ք Սփիւոֆում հայապահպանման ամենէն հզօր գործարարներէն մէկը կազմող հայ մամուլի, այս դէպքում՝ «Քաջ Նազար»ի 40-ամեակի Յոյնիմական հանդիսութեան առիթով, վերանորոգուած ու խոտով տօնակատարենք հայ թերթի, հայ գիր ու գրականութեան ու մշակոյթի փրկարար դերն ու առաջնութիւնը եւ դրան գուգահեռաբար՝ հայ մամուլի սպասաւորի երախտարժան աշխատանքը:

Խոնարհաբար՝
Յովհաննէս Բալայեան
«Քաջ Նազար»ի հրատարակիչ-խմբագիր

ՄԱՍԻՍ ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

massispost.com
daily news updates

ՓԱՐԻՉԻ Ա. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐԻԻՐՏԱՍՆ ԱՄԵԱԿԻՆ 1902-2012


ՊԱՐԵՏ Ծ. ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆ

Կարելի չէ կարճ յօդուածի մը սահմանին մէջ ամփոփել գրութեան հերոսը, որուն յիշատակը վերակենդանութիւն մը կը ստանայ այս տարի՝ դար մը ետք Փարիզի մէջ Հոկտեմբերի հանդիսաւոր տօնին:

1902. հարիւրատասնամեայ տարեդարձն է Փարիզի Ա. Յովհաննէս Եկեղեցւոյ հիմնարկէքին, բարերարութեամբ՝ Մեծանուն ազգային բարերար՝ Ալեքսանդր Մանթաշեանի, որուն անունը միշտ վսեմ եւ լուսաւոր կը մնայ մեր սրտերուն մէջ որպէս անպարտելի մեծութիւն մը հայ հոգիին:

Հայ Եկեղեցին եղած է եւ կը մնայ «Խօսքի եւ գործի առաքելը»: Կ'ամփոփէ «մեր բոլոր յոյզերը, իղձերը իր մայրական գերագոյն սիրոյ մէջ: Այս հաւատքին ցոյացումն է Փարիզի Մայր Եկեղեցւոյ շինութիւնը Աղթամարի եկեղեցւոյ ճարտարապետութեան ոճի հետեւողութեամբ, առանց խանգարելու Փարիզեան մեծաշուք քաղաքին յատկանշական նկարագիրը, Ֆրանսացի ճարտարապետի կողմէ (Ա.Զ.):

Հարիւր տարիներ առաջ կարգ մը կովկասահայ եւ Փարիզահայ թերթեր կ'առաջարկեն Փարիզի Եկեղեցւոյ շինութեան, սակայն իրողութիւնները փաստի պէտք չունին: «Հայ Եկեղեցին եղած է ամէն ինչ որ կը բնորոշէ ազգի մը հոգեկան կեանքը»: Պրն. Մանթաշեան իր ժամանակին կը հանդիսանար մեծագոյն առեւտրականներէն մէկը իւրի եւ բամպակի, եւ բարեկամ ժամանակի ամենէն հարուստ եւ ազդեցիկ մարդոց ինչպէս Բո-



չիլոնները եւ Ռուսաստանի Նոպրլ Ընտանիքը: Գահիրէի մէջ կը հանդիպի Գալուստ Կիւլպէնկեանին, որ Համիտեան ջարդերէն փախած էր եւ գինք կը ներկայացնէ կարեւոր շրջանակներուն: Մանթաշեան հնարամիտ եւ շրջահայեաց: Գիտցաւ եւ գզաց անհրաժեշտութիւնը Եւրոպայի ամենաազդեցիկ եւ ամենազեղեցիկ քաղաքներէն՝ Փարիզի մէջ կառուցել հաւատքի եւ բարոյական գոյութեան մեծագոյն ապակէնը Հայ Եկեղեցին: Մանթաշեան կ'ըսէ. «Ընտրած եմ Փարիզը, որովհետեւ հոն գործածած եմ իմ ամենաշատ մեղքերը»: Ֆրանսական կառավարութիւնը այս առիթով Պրն. Մանթաշեանին կը պարգևատրէ Պատուոյ Լէգէոնի խաչը՝ Փարիզի պարգեւելով «Նոր գեղեցկութիւն մը»:

Փարիզի Հայ Եկեղեցին հայ ցեղին հանճարեղ ճարտարապետութեան արտայայտութիւններէն մին է: Արուեստի գլուխ գործոց մըն է իր պարզութեանը մէջ՝ հայ հոգիին ինքնուրոյն արտայայտութեամբ: Երբոր կը մտնես Հայ Եկեղեցի ակամայ կ'առաջնորդուիս աղօթելու առանց չորս կողմի զարդարանքը քեզ խանգարելու: «Մեր շարականները այդ ներքին հոգիին գեղեցիկ դաշնակումն են» (Ա. Զ.):

Պրն. Մանթաշեան իր ժամանակին կատարած է բազմաթիւ այլ հանրօգուտ շինութիւններ եւ բարերարութիւններ: Ինչպէս Թիֆլիսի Ներսէսեան ձեմարանին եւ էջմիածնին: Կառուցած է Պաքուի օփերան եւ Թիֆլիսի թատրոնը: Նաեւ երկու հարիւրէն աւելի տաղանդաւոր եւ խելացի ուսանողներուն Կոմիտաս վարդապետի ուսմանց ամբողջ ծախսը մեկենասողը: Կասկածէ վեր է իր սէրը Հայ Եկեղեցւոյ եւ Հայ Մշակոյթին հանդէպ: Անոր համար իր անունին մէջ կայ եւ կը մնայ Հայ ժողովուրդին սիրոյ երախտագիտութիւնը: Յարգանք իր անմոռաց յիշատակին: Կը մահանայ Ապրիլ 19, 1911ին եւ կը թաղուի Թիֆլիս Վանք Եկեղեցւոյ մէջ, որ 1933ին Պերիայի հրամանով կը կործանուի եւ գերեզմանն ալ կ'անհետանայ (A.W.):

Այս խորհրդածութիւններուն առթիւ մեր մտքին առջեւ կը բացուին այլ հարցեր որոնք աննպաստ տպաւորութիւն կը ձգեն մեր ժողովուրդին նկարագրին վրայ: Ինչպիսի է հարցը, աւելի քան հարիւր տարիներ առաջ Օրմանեան Պատրիարքի թելադրութեամբ Խրիմեան՝ Ֆրանսայի Թեմն ալ կը հաստատէ, Փարիզը ունենալով որպէս գլխաւոր կեդրոն: Իւթիւճեան Ծ. Վրդ. Կը նշանակուէր որպէս պաշտօնական Հովիւր Փարիզի:

1902-1905ին հակակղերական ոգին Ֆրանսայի մէջ յատկապէս Կաթոլիկ եկեղեցւոյ դէմ, պատճառ կ'ըլլայ եկեղեցական կալուածներու պետականացման: Եկեղեցին թողով միայն պաշտամունքային բաժինը՝ նոյնինքն պետականացած եկեղեցիներէն ներս: Հոգեւորականները հետզհետէ հեռու կը մնան վարչական գործերէ: Փարիզի հայ եկեղեցւոյ մէջ 20-ական թուականներուն, մասնաւորաբար 1926-1927, կարգ մը աշխարհականներ, Թաղական Խորհուրդէն, քով քովի գալով առիթ կ'օգտագործեն Եկեղեցւոյ վարչական սիստեմին աշխարհականացման եւ այդ կը տարածուի շուտով համայն Ֆրանսայի մէջ, ներառեալ այսօրուան ինդրալարոյց Նիս քաղաքը: Վարչական եւ կրօնական գործի բաժանումը կարգ մը մարդոց խելապատակին մէջ անջատման գաղափարն էր անուցած է Հայ Եկեղեցւոյ միասնական ոգիին եւ անոր միութեան հակառակ: Ֆրանսայի Թեմը ինչպէս միւս բոլոր Թեմերը հաստատուած են Հայրապետական հեղինակութեամբ եւ Հայրապետական Կոնդակով: Համայնքի մը անհատները չեն որ Թեմերը կը հաստատեն, անհատներ՝ քով քովի գալով Օրէնքին ծրագիրը կը ներկայացնեն պատկան իշխանութեանց վաւերացման եւ ապա Կաթոլիկոսական Բարձր Հայրապետական Տնօրինութեան կամ հաստատման:

Որեւէ Պետութեան մէջ հաստատուած Թեմերը ենթակայ են Ամենայն Հայոց Հայրապետութեան: Եւ այս իսկ եղած է կամքը Հայ ժողովուրդին: Այս առթիւ մեզի համար անհասկանալի է Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ գործող Միական Խորհուրդին վերաբերմունքը,

Շար.ը էջ 19

ՀԵՌԱՏԵՍ ԽԻՉԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY


Ճաշկերոյթ Պարահանդէս եւ Ազգային Երգերու Երեկոյ
 Նոյիրուած Ա.Դ.Հ.Կ.ի 125 Ամեակին
DINNER DANCE & PATRIOTIC SONGS
 DEDICATED TO 125th ANNIVERSARY Of S.D.H.P.

Կազմակերպութեամբ՝ ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 PRESENTED BY GAYDZ YOUTH ORGANIZATION

Մասնակցութեամբ՝ Լոնտոնէն Սիրուած Երգիչ
 եւ ազգային երգերու մեկնաբան՝
Սամուէլ Վարդանեանի
 SPECIAL GUEST SINGER
 From London
SAMVEL VARDANIAN

Տեղի կ'ունենայ Ծաբաթ, Սեպտեմբեր 22, 2012
SATURDAY SEPTEMBER 22, 2012
AT AMBROSIA BANQUET HALL
 6410 SAN FERNANDO RD. GLENDALE, CA 91201
 Ժամը 8:30 ԷԿ սկսեալ STARNING AT 8:30 P.M.
 Մուտքի ցուր՝ DONATION \$65.00
 FOR TICKETS & MORE INFORMATION
 CALL KARINE 818-324-0574 or GARINE 626-755-4773

ՆՈՒԻՐ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀՅ ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՆՈՒԻՐ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՀԵՏ



Հարցազրույցը վարեց ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ

Հարց. Գնահատելի է սփիւռքի նախարարութեան ձեռնարկած «Սփիւռք» ամսագրի ղարկոցի լրագրողների վերապատրաստման դասընթացների այս հրաշալի ծրագիրը: Ինչ նպատակաւ եղաւ այս մտայնացումն ու ծրագիրը եւ ինչ հետակարգեր ունի այս առնչութեամբ:

- Նշենք, որ «Սփիւռք» ամսագրի ղարկոցի իրագործման գաղափարի հիմքում դեռեւս 2010 թվականին ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից Ստեփանակերտում իրականացուած հայ լրագրողների 5րդ համահայկական համաժողովում Սփիւռքում, մասնաւորապէս եւրոպական երկրներում, գործող հայկական լրատուամիջոցներում լրագրողների պակասի, եղածի անբաւարար կրթական ցենզի վերաբերեալ եւ առաջարկուած էր ելք գտնել ստեղծուած իրավիճակից:

ՀՀ սփիւռքի նախարարութիւնը նախարար Հրանուշ Յակոբեանի հրամանով անմիջապէս յաջորդ տարի ստեղծեց ինչպէս երիտասարդ լրագրողների վերապատրաստման, այնպէս էլ առաջնորդների ղարկոցը: 2011 թ. լրագրողների վերապատրաստման դասընթացներին մասնակցեց 18 երիտասարդ լրագրող 11 երկրից: Այս երկու ղարկոցների յաջող կայացումը, կարծում եմ, ոգեշնչեց եւ ՀՀ Սփիւռքի նախարար Հ. Յակոբեանը որոշեց Հայաստանի դարձնել համայն հայութեան համար մայրենի ուսուցման կեդրոն՝ արդէն այս տարի ստեղծելով «Սփիւռք» ամսագրին ղարկոցն իր 5 բաժիններով:

Կարծում եմ, ՀՀ սփիւռքի նախարարութեանը յատուկ է անընդհատ առաջընթացը եւ վստահ եմ, որ սրանով էլ չենք սահմանափակուի:

Հարց. Ծրագիրը կ'ընդգրկէ «Հայ-թրքական յարաբերութիւններ», «Արցախեան հիմնախնդիր» եւ «Հայոց Յեղասպանութեան նախնականները, դատաւարութեան հետեւաւանները» թեմատիկան: Ինչու էք ընտրել այս թեմաները եւ ինչ է պահանջուած Սփիւռքի լրագրողներէն այս թեմաների առնչութեամբ:

- Սփիւռքը բազմաշերտ է, բազմակարծիք եւ բազմաշակոյթ, ինչն էլ եւ Սփիւռքի եւ մեր

հարստութիւնն է: Սակայն այս բազմաշերտութիւնն ու բազմակարծութիւնը պէտք է միանակա՛նութեան վերածուի Հայի ու Հայաստանի համար անչափ կարեւոր 5 խնդիրներում, որոնցից երեքի շուրջ էլ կազմակերպել ենք լրագրողների համար նախատեսուած այս տարուայ դասախօսութիւնները՝ Հայոց Յեղասպանութեան ճանաչում, դատաւարություն, Արցախեան հիմնախնդիր եւ հայ-թրքական յարաբերութիւններ:

Գաղտնիք բացայայտած չեմ լինի, եթէ ասեմ, որ մեր լրագրողներից շատերն այնքան էլ լաւ չեն տիրապետում այս հիմնախնդիրների անհրաժեշտ պատմա-քաղաքական մանրամասներին, ինչն էլ տեղեկատուական պատերազմում կարող է որոշ նահանջ արձանագրել: Գաղտնիք ասած չեմ լինի նաեւ, եթէ արձանագրեմ, որ Սփիւռքի լրագրողների մեծ մասը, հրաշալի տիրապետելով Հայոց Յեղասպանութեանն առնչուող խնդիրները, լիովին չեն պատկերացնում ինչպէս Արցախեան հիմնախնդիրն, այնպէս էլ հայ-թրքական յարաբերութիւնների արդի գործընթացները՝ Հայաստանի Հանրապետութեան վարած քաղաքականութեան առնչութեամբ:

Կարծում եմ ասուածից արդէն իսկ հասկանալի դարձաւ թեմաների ընտրութեան շարժառիթը, իսկ Սփիւռքի մեր գործընկերներից ակնկալում ենք աշխարհի հանրութեանը այս հարցերի ճշմարտացի եւ արդարացի մեկնում, պարզաբանում եւ համահայկական հարցերի լրբերիչի ուժեղացում: Յուսանք մեր ջանքերն արդիւնք կը տան:

Հարց-Սփիւռքի լրագրողների ամսագրի ղարկոցի ծրագրի անհերքելի յաջողութիւնն արձանագրելով՝ հետեւաւար ինչ յաւելեալ ծրագիրներ ունի այս միջոցառումին յաջորդող տարիներում:

Ուրախ եմ, որ հենց մասնակիցներն են տալիս գնահատականներ կատարուած աշխատանքին եւ վստահեցնում եմ, որ ՀՀ Սփիւռքի նախարարութիւնն ամէն ինչ կ'անի ծրագիրն էլ աւելի կատարելագործելու եւ նոր ոլորտներ ընդգրկելու առումով: Աւելացնեմ նաեւ, որ այս տարի Հոկտեմբերի 4-6ը, Երեւանում կայանալու է «Հայոց Յեղասպանութեան 100րդ տարելիցին ընդառաջ» խորագրով հայ լրագրողների 6րդ համահայկական համաժողովը, ինչը նոյնպէս կարեւոր է լրագրողական աշխարհի համար:

«ԵԱՆ»ԵՐԸ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՍԷՋ (LOS IAN EN EL ARTE ARGENTINO CONTEMPORANO) ՀԵՂԻՆԱԿ՝ ՏԱՅԱՆԱ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

«Ես այդ լոյսին, այդ յոյսին մէջ կը տեսնեմ, Հայ հոգիի հողմակոծ ծառը վսեմ»:

Վ. ԹԷԼԵԿԱՆ

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՑԵԱՆ

Փետրուար 2012, Արժանթինի մայրաքաղաք՝ Պուէնոս Այրէսի Ագեան Հրատարակչատունէն լոյս տեսաւ վերոնշեալ խորագիրը կրող իրապէս խիստ շահեկան, ոչ միայն հայութեան, այլ՝ Արժանթինի հարուստ մշակոյթը, թարմ եւ հետաքրքրական տեղեկութիւններով առաւել եւս հարստացնող հրատարակութիւնը:

Գիրքին հեղինակն է, Պուէնոս Այրէսի Ռ. Ա. Կ.ի «Սարտարապատ» երկրագործ շաքարաթերթի ժրջան խմբագիր՝ Սփիւռքի եւ հայրենիքի մտաւորականութեան քաջածանօթ՝ երիտասարդ գործիչ՝ Տայանա Տէր Կարապետեանը:

2011-ին Պուէնոս Այրէս հուշակուած էր գիրքի մայրաքաղաք նմանապէս, 2012ը՝ Երեւանը Մ. Ա. Կ.ի կողմէ հուշակուած էր Միջազգային Գիրքի մայրաքաղաք:

Այդ առիթով, հեղինակը - Արժանթինի մէջ լոյս տեսած այս գիրքը - ձօնած է աշխարհասփիւռ հայութեան քաղաքամայր Երեւանին: Այս հատորով, նոր կամուրջ մը կը դրուի Արժանթինի եւ հայ բարեկամ ժողովուրդներու միջեւ:



Տայանա Տէր Կարապետեան ծնած է Պուէնոս Այրէս. աւարտած է Պետական Ուսուցչանոցի հիմնարկը: Ան խմբագիր է, ինչպէս նաեւ Թէքէեան Մշակութային Միութեան ղեկավարներէն է, եւ այս միութեան ներս կը տանի գրական եւ գիրքերու հրատարակման շատ բեղուն եւ գնահատելի աշխատանք մը, մեծապէս նպաստելով գաղութի մշակութային կեանքին եւ աշխուժացնելով զայն:

Այս իրապէս շատ գովելի հրատարակութիւնը հովանաւորած են Արժանթինի մօտ Հ. Հ. դեսպանատունը, Պուէնոս Այրէս քաղաքի Մշակոյթի նախարարութիւնը եւ մեր հայրենիքի, Հ. Հ. Մշակոյթի եւ Սփիւռքի նախարարութիւնները:

Երեւանի մէջ, Սփիւռքի եւ Մշակութային նախարարութեանց հովանաւորութեամբ, պետական եւ հասարակական բարձրատիճան ղեկավարներու ներկայութեամբ տեղի ունեցաւ այս գիրքին գինեձօնը, բազմաթիւ թերթերու եւ երկտրոնային մամուլի մէջ մեծ արձագանգ գտնելով: Նմանապէս, Պուէնոս Այրէսի մէջ, քաղաքի Մշակութային նախարարութեան նախաձեռնութեամբ, Առաջնորդ Գիտակ Արք. Մուրատեանի, Հ. Հ. դեսպանի ներկայութեամբ, ելույթ ունեցան նախարարութեան բարձրատիճան



անձնաւորութիւններ, մեծապէս գնահատելով այս գործը, որ հայ տեղական շրջանակներուն մէջ մեծ արձագանգ ունենացաւ:

Այս գիրքով, հեղինակը մեզի կը ներկայացնէ արժանթինահայ մօտ քառասուն նկարիչներ եւ քանդակագործներ: Արժանթինի հայութիւնը բաղկացնողները, սկզբնական շրջանին, ընդհանրապէս՝ Այնթապէս, Մարաշէն եւ Հաճընէն գացած հայեր էին: Անոնք «Թուրք» կը կոչուէին տեղացիներուն կողմէ: Յետագային, Ռուսաստանէն, Պոլիսէն, Լիբանանէն եւ Սուրիայէն հայեր երթալով, հայերը Armenios կամ Los Ian սկսան կոչուիլ, իրենց ազգանուններով գնահատուելով, որովհետեւ Արժանթինի մէջ, ժամանակին պարտադիր էր լատինական առաջին անուններ կրելը:

Այս գիրք-ալպոմով, Հեղինակը սպաներէն, անգլերէն եւ հայերէն լեզուներով ներկայացուցած է գիրքին մէջ զետեղուած արուեստագէտները, աւելի լայն շրջանակի մը ծանօթացնելու գնահատելի նպատակով: Այս նկարիչները ոչ միայն հայութեան համար, այլ՝ արժանթինեան մակարդակով վարկ եւ մեծ անուն վայելող արուեստագէտներ են:

Այնահաճօղ, արհեստավարժ ձեւով ներկայացուած գործերը դիտելով, առաջին իսկ վաշտկեանէն, կը հիանաս, կը հմայուիս անոնցմով:

Անկեղծ ըսած, այս հատորը թերթատելով, հիացախառն եւ յուզմունքալից ամսագրի կ'ապրիս, կարդալով եւ գիտնալով, որ աշխարհի այդ հեռաւոր փերտուն վրայ, նման պատիւ բերող հայորդիներ կ'ապրին, որոնք իրենց արուեստով, իրենց գործերով, հայու անունը այնքան բարձր կը պահեն, միշտ անխաղախ կապուած մնալով իրենց պայպենական, յաւիտենական Մայր Հայաստանին:

Այս արուեստագէտներէն ոմանք, ոչ միայն Արժանթինի բարձրագոյն մեծանուն սրահներու մէջ ցուցադրած են իրենց նկարները, այլ անոնցմէ ոմանք՝ Եւրոպայի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու աշխարհահռչակ սրահներու մէջ ցուցադրած են իրենց ստեղծա-

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԻՆ ԱՍՏՈՒԱԾ ԷԼ ԶԻ ԴԻՄԱՆԱՅ»

ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆ

Որպէս մեր այս գրախօսական մտորումների խորագիր՝ ընտրեցինք վերոյիշեալ տողը, քանզի մեր հետաքրքրասիրութեան խնդրոյ առարկան այս պարագային բանաստեղծ Աւիկ Դէյրմէնջեանի գիրքն է՝ «Յոյս եւ լոյս» անուամբ, 224 էջ ծաւալով, Երեւան, 2011թ., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ»։ Նկարիչ-ձեւաւորող՝ Գրիգոր Մարիկեան, խմբագիր-հրատարակիչս՝ Գրիգոր Պանիկեան։ Կատակով էլ ասենք, որ մի Գրիգոր պակասում է... Նարեկացին։ Յիրաւի, այս ժողովածուն յոյսից դէպի լոյսը ձգտող հոգու բանաստեղծական տուայտանքների հանրագումար է, արածի ու չարածի իւրովի հաշուետուութիւն, ներառելի տպագիր մրմունջների չափածոյ կշիռ, ոգու դիմագիծ ու պահանջարկի ձայնագարան։ Պարտուած իր անհաւակնտ համեստութեամբ՝ արդէն իսկ այն խիստ տարբերում է ողջ արդի հայ պոէզիայի յաջող եւ անյաջող աղմուկ-աղաղակներից։ Ասել է, թէ «մի կտուրի տակ» ի մի են բերուած ինչպէս չճշացող, կուրծք չձեծող, գործող բանաստեղծի հայրենացաւը՝ «Երկրային դրախտ», այնպէս էլ գրողական հանածոյ վերապրումները՝ «Անմեկնելի աշխարհ», յաւերժի թեմաներից՝ սիրապատումը՝ «Սիրոյ շամանդաղ», ինքնախուզարկման-ինքնախարագանման եզրայնգումները՝ «Ատողագարդ հեքիաթ», տաք արեան եւ վճիտ աւշի խտացումներ հանդիսացող «Քառեակներ» բաժինը, իսկ ամէնավերջում էլ՝ թեւաւոր, երկիրն քառու, կենսական բնորոշումների խոհարարի խոստովական տուրքը՝ «Նոհեր եւ խոկումներ»։ Ընդամենն, պարզ ոգորումների ընդհանրացուած դելտա։ Նախ եւ առաջ պիտի նշել նաեւ այն հանգամանքը, որ ժողովածուն աչք շոյող հրատարակութիւն է, այսինքն, միջոցներ չեն խնայուած, յարմար չափս է ընտրուած՝ 6/9, լաթակազմ է, ոսկեգոյն բրոնզի դաջուած, ոճաւոր անուն-ազգանունով, ասոնանային երկբառանի հնչեղ խորագրով՝ մուգ կապույտի ֆոնին, որ երկնակամար է նշանակում, կաւճապատ թղթերով, ընթեռնելի համաշարունակով, ժլատ, բայց եւ հաճելիօրէն նկարագարուած տիտղոսաթերթերով, որոնց էլ իրօք յաւելեալ իմաստ են տուել հեղինակային խօսքի դիպուկ եւ նպատակին յարիւր բնաբանները։ Մենք մեր այս անկողմնակալ նախաբանն արեցինք կարծես անձնագրային առաքելութեանը յատուկ մի հպանցիկութեամբ՝ տալով սկզբնական տեղեկութիւն։ Սակայն մեր ընթերցողական հմուտ ուշադրութեան բուն դրդապատճառը նմանօրինակ անմիջականութեան անհրաժեշտութիւնն ու-

նի, որքան որ հեղինակը։ Թւում է, որ գրքի մեջ ամփոփուած են թաթափիններում զետեղուած աւարտուն եւ անաւարտ բանաստեղծութիւնները, քառատողերն ու քառեակները եւ նոյնիսկ արձակ ափորիզները գրուած են մէկ շնչով, առանց հաշուի առնելու հայ պոէզիայի դարաւոր զարգացումն ու նուաճումները... Չեմ կարող ասել, գիտակցաբար է շրջանցուած հայ դասական ժառանգութիւնը, թէ՞ ոչ, սակայն մի բան յստակ է, որ համեստ ստեղծագործող Դէյրմէնջեանը վերջերս իր ողբեր չանցաւ հայցի գրական անուան եւ սկսեց ստորագրել՝ ԱՒԻԿ ԴԵՐՄԵՆՅ գրողական բարեհունչ կապակցութեամբ։ Արդէն դա եւս առաջընթաց է։ Կարծես կտրուկ պահանջներ չի դրել իր առջեւ, թերեւս ընդամենը կրկին ցանկացել է ներաշխարհը գրքով ի ցոյց դնել՝ ի սրտէ վերապատմելով գրական-զեղարուեստական իր ամբողջ համոզմունքը՝ ընթերցողին իւրովի մղելով տողատակերի անթերի ընկալմանը... Ոչ միայն դա։ Հետապնդուած խնդիրն աւելին է։ Նախ ընդգծենք այն, որ նա չգրել է չի կարող, յետոյ էլ ո՞նց դիմագրաւի մեր համատեղ ապրուող պանդխտութեան գրոհին, ուժացման արմատակուլ արշաւանքին... Նա ապրում է ԱՄՆ-ի խոնավ հիւսիսի Պոսթոն քաղաքում, իսկ մենք՝ Երաշտի հասնող թէ՛ Տարաւի Լոս Անճելոս՝ հրեշտականոց կոչուած, բազմազգ, բազմադէմ խառնարանում։ «Օտար, ամալի ճամբէքի վրայ» ենք բոլորս էլ... Մեր երկուստեք հայրենացաւը նոյնն է, այրող-ապրուող կարօտախտը՝ նոյնը, մտորումներն ու տազնապներն առաւել եւս... Ուստի շիտակ մտաւորականի եւ գործարարի եսերը միաւորող Աւիկ Դերմէնջե, յոյսի եւ լոյսի բանաստեղծը եւս ՊԱՐՏԱԻՈՐ է անընդհատ գրել՝ հայապահպանման գիտակցումով լիցքաւորուած եւ ներքոյիշեալ երկու բանաստեղծութիւնների պէս կայացած վարքագծով, որպէսզի բոլորիս էլ կարողանայ կաշառել զեղեցիկ արուեստով եւ հաղորդակից դարձնել իր իսկ աննման բարութեանն ու բարօրութեանը, հենց այսպէս հոգեհարազատօրէն, անկեղծաբար եւ այսքան անպաճոյճ.

ՀՈԳՈՒ ՁԱՅՆԸ

Ճակատագրի փայլով
Գաղթի նամբան բոնեցի,

Դարձայ մի հեգ տարագիր,
Բայց իմ հողը սիրեցի...

Տեսայ բազում վայելքներ,
Փորձուքի ու տագնապներ,
Հոգուս ձայնի ու անսպառնակ,
Ես իմ երգը սիրեցի...

Հպարտացայ անցեալով,
Մատուցմերով հայրենի,

Իմ սուրբ ու խոյն հնազանդ
Միշտ նոյն հայր մնացի...
(Էջ 59)

ՄՐԱՋԱՆ ՈՒԽՏ

Հասկանում եմ, որ՝
Բուժն ունի երախ,
Բայց ես մրսելու իրաւունք չունեմ,
Անպատեհների,
Պայակ տալի մէջ,
Ծարաւ լինելու իրաւունք չունեմ,
Նեղուրքեան առջեւ
Օտար բանակի,
Ես երկնելու իրաւունք չունեմ,
Երդուել եմ փրկել
Հողն իմ Հայրենի,
Ուխտս դրժելու իրաւունք չունեմ... (Էջ 44)

Բանաստեղծական մաքուր հաւատամբ, որից սկիզբ է առնում հոգու ինքնահաշտութիւնը, ոչ թէ հանդուրժողականութիւնը։ Անցել են այն ժամանակներն ու տարիքները, երբ ինքնատիպ առկայծող սողեր էինք առանձնացնում, դրուատում է հատուածաբար, անուանում խոստումներով։ Բայց Աւիկ Դերմէնջե էլ, մենք էլ այն տարիքներում ենք արդեն, որ իրօք վաստակել ենք աջ ուսի վրայով շրջուելու եւ ետ նայելու իրաւունքը, թէ ի՞նչ գրական ժառանգութիւն ենք թողնելու մեր դժուար ու քմահաճ եւ գրեթէ անանցանելի ճանապարհներին։ Այնպէս, որ մենք մեր կամայ, թէ՛ ակամայ վտարանդիութեան պայմաններում հայ անհատի ազգային ողջ նկարագիրն անաղարտ պահպանելն ու զարգացնելը հերոսութիւն ենք համարում, էլ ուր մնաց հայահոծ համայնքներին... Յոյսի եւ լոյսի, ասել է, թէ հոգու եւ ոգու բանաստեղծ Աւիկ Դերմէնջի քնարական ձայնը էջ առ էջ խտանալով՝ հնչում է հպարտ եւ անսահման բարեգութիւն, պինդ գաղափարախօսութեամբ, անյաւակնտ, անմիջական, պատմական լիչողութեամբ թափախուն, գերծ՝ վարժանքի լարախաղացութիւնից եւ անկետադիր վարակից, օրաթերթերից թիւած պարբերութիւններով լի եւ ցմփոր, ջուր ձեծող հատորներից, որոնք միտումնաւոր, միամիտ ու մեղկ ընթերցող վախեցնելու աստիճան, նողկալիօրէն յաճախ կոչուում է «ճախ մողեռնիզմ»։ Փառք Աստուծոյ, նա այդպիսին չէ։ Այս հեղինակի կենսական հայրենասիրութեան մասին անընդհատ ցանկանում ես լաւ բաներ ասել, մանաւանդ՝ գրել, ինչը որ մենք անում ենք հիմա՝ մեր բաց քննարկի ողջ պատասխանատուութեամբ։ Միայնուած չենք լինի, եթէ յուսանք, որ վաղը նոր լոյս ընծայող ժողովածուն մեզ թեւանցուկ առաջ կը տանի՝ մեր ունկերին պարզ շնչա-

լով նորանոր ու թարմ խորհուրդներ, մէկ անգամ եւս ապացուցելով պոսթմոդերնական հայ բանաստեղծի քնարական հերոսի բանաստեղծական ջերմ եւ կշռադատուած, պաշտպանուած անմեղութեան վարկածը.

ՄԵՂԱՆՁՈՒՄ

Ես իմ տեսածին էլ չեմ հաւատում,
Որ չմեղանչեմ՝ աչքերս եմ փակում,

Ոնրագործներին հիմա մեծարում,
Չարին պատում եմ, արդարին դատում,
Խարում եմ, ստում, ժպտալով ատում,
Տարակուսանքն է իմ հոգուն պատում։

Մեղաւոր եմ ես՝
Որ իմ տեսածին էլ չեմ հաւատում,

Մեղաւոր եմ ես՝
Որ չմեղանչեմ՝ աչքերս եմ փակում... (Էջ 89)

Ընդգծուած քաղաքացիութեան դրսեւորում է տուեալ բանաստեղծութիւնը, դաւանանքի փաստաթուղթ, որը պատ ու պարիսպ կարող է ծակել, որ բնական կամ արհեստական անջրպետի գոյգ կողմերում էլ անհանգստի արեւը միշտ ծագի հաւասարագոր լուսաւորութեամբ, ամէնուր տարածի ծլարձակման իր ջերմութիւնը՝ բաւարար հոգատարութեամբ, հոգեւոր արժէքների գլխավերելից իսպառ վանի անտարբերութեան եւ կամակոր մոռացութեան ամպերը... Անշուշտ, լաւատեսութիւնն ուղեկցում է այս հեղինակին, բայց մտավախութիւնը յանգեցնում է նաեւ հետեւեալին, որ

Ամէնուր փնտուում լոյսն արդարութեան,

Մինչդեռ բախում եմ խաւարին միայն։ (Էջ 84)

Այսուամենայնիւ, ինքնաճանաչման չաթիակն երթ մաղթենք չափազանց բարի բանաստեղծ Աւիկ Դերմէնջին։ Իսկ մեր գրաւոր սոյն խոստովանութեան աւարտից առաջ ցանկանք նրան գրական խաւարի զգեստում-տապալում՝ ի փառս արդարութեան լոյսի ժրջան որոնման, համազգայինի ոգեկոչման, հայցի հայրենասիրութեան շարունակական բացալատման, վերադարձի կայացման, ինքնահաստատման մի նորոգ աստիճանի նուաճման, որը եթէ սարի ետեւում չէ, այլ՝ յաջորդող առաւել հասուն եւ խօսուն ժողովածուի լուսաւոր էջերում է, ինչպէս առողջ կուտ կորիզը հայկական ծիրանի մէջ՝ գալիք ծիրաննու լոյս աշխարհ գալուն հողով հաւատարիմ եւ անվերջ արարչական սպասումներով գինուած։

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՆՄԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԸՆՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՁ « ՂԵԿԱՎԱՐՄԱՆ » ԵՐԿԱՅՆՔԸ, ԼԱՅՆՔԸ ԵՒ ԽՈՐՔԸ

Ան չի վհատեցնել քեզի, բայց դուռն տակաւին կը վախնաս: Կ'ըսէ, թէ կը սիրէ քեզի, բայց դուռն տակաւին անապահով կը զգաս: Ան կը փաղաքշէ քեզի, բայց դուռն տակաւին անարժէք կը զգաս: Իր ուզած բոլոր բաները կու տաս, բայց տակաւին չանցաւոր կը զգաս: Զեր յարաբերութեան մէջ ի՞նչն է, որ շատ կը տխրեցնէ, անհանգիստ կ'ընէ եւ միեւնոյն ժամանակ գայն վերջացնելու անկարող կը դարձնէ քեզի: Հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք երեք ուղղութիւններ՝ երկայնքը, լայնքը եւ խորքը այն տուփիկին, զոր ձեր սիրած ձմտորէն ղեկավարող/իշխող տղամարդը ձեզ դրած է անոր մէջ:

Հարցը այսպէս չի շարունակուիր:

ՂԵԿԱՎԱՐԵԼ ԸՆԴԴԻՄ

ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ

Ի մտի ունեցէք, որ ձմտորէն «ղեկավարել» բառը պէտք է նախ գանազանել ազդեցութիւն ունենալի: Վերջինս բնական եւ ճանչցուած վերաբերմունք մըն է, որմով ուրիշները կը համոզենք, որ մեր մտածածը ճիշդ է, առանց ստիպելու անոնց, որ կառչած ըլլան անոր: Ձմտորէն ղեկավարել/իշխելը հարկադրական «ուզմովարութիւն» մըն է, որ կը կիրարկուի անապահով անհատի մը կողմէ, որ մեծ դժուարութիւն ունի առողջ փոխարար յարաբերութիւն մշակելու, ապահովելու համար իր եսակեղծութիւնն ապօրոյց անոնց, առանց նկատի առնելու անոնց ծախսը ուրիշ մարդոց վրայ: Այս մէկը կը նմանի տարբերութեան անձի մը, որ քեզի պարելու կը ներշնչէ, եւ այլ մը՝ որ պուպրիկի նման, վերէն թելերով կը հակակշռէ պարային շարժումները:

ԴՈՒՆ ԽԱՂԱԼԻՔ ԵՍ

Ղեկավարող անձը, աշխուժօրէն ուրիշներուն մէջ որոշ յատկութիւններէն կը փնտռէ: Ինքնատիպ գոհ եղող կիներ հաճեցնելու հիւանդութենէ կը տառապի՝ իր անձին բարօրութեան հաշուին, ծայրայեղօրէն փորձելով գոհացում պատճառել ուրիշներուն: Ան, օրինակի համար, կրնայ յարատեւօրէն շուրջը նուէրներ գնել իր ընկերոջ՝ նոյնիսկ եթէ ինք պիտի սնանկանայ: Ան նաեւ կը վախնայ մերժողութեան ընկերակցող ժխտական զգացումներէն. անկարող է դիմագրաւելու այդ կացութիւնը, ան ամէն ինչ ամէնեւին պատրաստ է կատարելու՝ բոլորէն ընդունուած ըլլալու համար: Անոր ցած ինքնարժեւորումը, ժխտական զգացումներուն հետ ընկերակցուած, գինք ընդունակ կը դարձնէ «ղեկավարել»ը սիրող անձերուն, որոնք, իրենց կարգին, վարպետ անձեր են մարդոց թերութիւնները հետապնդելու եւ գտնելու:

ՄԻ ՔԱՆԻ ԹԵԼԵՐ ՔԱՇԷ

Վնասակար վերաբերմունքը սրամիտ կերպով կրնայ պահել «ղեկավարել» կամ իշխել սիրող անձը դիւրին չէ գիտնալ: Այս պատճառով կրնայ տարիներ երկարի մինչեւ անդրադառնաս, որ ինկած ես վարպետ անձի մը թակարդը: Անոնք ինչպէ՞ս կրնան պահել այդ երեւոյթը, երկու հիմնական ձեւեր գոյութիւն ունին, որոնք կ'օգտագործուին այդպիսի անհատներու կողմէ՝ շահելու խոստումը եւ կորուստի խուսափելու խոստումը: Առաջինը կ'ենթադրէ խօսք տալ կողակիցին բան մը

ապահովելու՝ հնազանդութեան պարագային: Իսկ երկրորդը հակառակ ուղղութեամբ կը քայլէ. այսինքն՝ ապառնալ կողակիցին, անհնազանդութեան պարագային բան մը կորսնցնելու:

ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԾԻՐԻՆ ԴՈՒՐՄ ԵԼԻՐ

Այս «յատկութիւնը» վատտակուած վերաբերմունք մըն է, ոչ ոք անով ծնած է: Այդ մէկը ապրուելու «ուզմովարութիւն» մըն է, զոր անհատ մը կը ստրկի մանկութեան շրջանին, հետեւաբար, վերաբերմունք փոխելը գրեթէ անկարելի է: Այս մէկը գիտնալով, փոխէ այս տեսակի պատկանող ընկերակցիներուն հետ վարուելու ձեւը. դադրիր անձնուրացօրէն հրահանգներու ենթարկուելէ, կարելի է սպառնալիքի առաջարկին դիմաց, ձգձգել եւ յետաձգել գործադրութիւնը: «Կը վերադառնամ երբ ժամանակ ունենամ անոր մասին մտածելու». միշտ նոյն նախադասութիւնը կրկնէ, նոյնիսկ երբ ան հարցնէ, թէ ինչո՞ւ ժամանակի պէտք ունիս: Ապա դիմակալէ յանցանքի, վախի եւ անձկութեան բացասական զգացումները: Յայտնաբերէ այդ զգացումներուն ետին կանգնող պատճառները եւ փոխէ այսպիսի կացութիւններու հակադրելու ձեւը: Այս առնչութեամբ օգնութիւն ստանալը, ի պահանջուող հարկին մասնագէտներու ցուցմունքներով, քեզի պիտի քաջալերէ ի վերջոյ դիմակալելու ընկերակցի: Յստակ եւ ուղղակի եղիր ուզածիդ նկատմամբ, ընկերակցող պատասխանատու պահէ իր արարքներուն եւ պատճառաբանութիւն մի ընդունիր սահմաններ գծելու առնչութեամբ:

ԱՅՍ ՏԵՍԱԿԻ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՁ ԵՍ

1) Ստիպուած կը զգաս ընկերակցիդ համար ընելու բաներ, զոր չես փափաքիր: 2) Ուժանիւթ սպառած կը զգաս իր կողքին: 3) Յարաբերութիւնը բացասականօրէն կ'ազդէ՞ բարեկամներուդ եւ ընտանիքիդ հետ յարաբերութեան վրայ: 4) Կը զգաս, թէ միշտ կը ձախողի անոր ակնկալութիւնները գոհացնելու: 5) Կը զգաս, թէ թակարդի մէջ բռնուած ես եւ չես կրնար վերջ տալ այս վիճակին: 6) Այս յարաբերութեան մէջ անապահով կը զգաս նոյնիսկ երբ ինք միշտ կը յայտնէ, թէ կը սիրէ քեզի: 7) Այս յարաբերութեան սկիզբէն ի վեր տեսիլդ եւ վարուելակերպիդ հանդէպ գէշ զգալու սկսած ես: 8) Յարաբերութեանդ մէջ աւելի տխուր կը զգաս քան ուրախ: 9) Կը զգաս, թէ իր պէտքերն ու փափաքները աւելի կարեւոր են քան քուկիներդ: 10) Կը խորհի՞ս, թէ այս յարաբերութիւնը բացասականօրէն կ'ազդէ առողջութեանդ վրայ: Եթէ այս հարցումներէն 6 եւ աւելին «այո» պատասխան տուած ես, ուրեմն հաւանականութիւնը մեծ է, որ դուն ղեկավարող/իշխող յարաբերութեան մը մէջ ես: Մասնագէտներ «ղեկավարող» անհատի վարքագիծին մէջ հետեւեալ ձեւերը կը նկատեն՝ իրենց գոհ հակակշռելու համար: Այս տեսակի անձ մը՝ * Անմեղի դեր կը խաղայ եւ կ'ուրանայ իր գործած սխալը, որքան ալ որ ակնյայտ ըլլայ այդ

ԲԱԺԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՁ ՓՆՏՈՒ

Բազմաթիւ ոչ-զգացական պատճառներ կան, զորս կրնանք պահ մը միտքէ հանցընել, որոնք յարաբերութեան ձախողութեան կը հասցնեն եւ կողմերը կը բաժնուին՝ առանց կարենալու չաջողութեամբ շարունակելու իրենց յարաբերութեան մէջ: Բաժանման պատճառներէն մաս մը ճանչցուած եւ տարածուած են, սակայն կան այլ պատճառներ, որոնք նուազ յատակ են եւ հարկ է գտնել փնտուել անձին խորքը եւ անհատին ընտանեկան պատմութեան մէջ: Այդ մէկը կարելի է գտնել այս պարագաներուն մէջ.

- 1) Ամէն ինչին տէր ըլլալով փափաքը.- Այս փափաքը ունեցող կողմը խելագրելու աստիճան կը ճնշէ երկրորդ անձը՝ ամէն կողմերէն, կ'անդամալուծէ անոր շարժումները, կ'արգելէ իրմէ գատ ուրիշին հետ հաղորդակցիլը, ինչ ալ ըլլան պատճառները:
- 2) Ընկերակցի հետ ապրելու անկարողութիւն.- Որոշ անհատներ մենակեաց եղած են եւ այդ վիճակը շատ կը սիրեն ու իրենց անձնական ազատութիւնը կը նախընտրեն ամէն ինչէ աւելի: Այս անձերը ուրիշներուն ներկայութիւնը կալանք կը նկատեն իրենց վրայ, հետեւաբար, անոնք կը ձախողին իրենց ամուսնական կեանքին մէջ եւ փախուստ կու տան անկէ առաջին իսկ առիթով:

3) Ընտանիքին մէջ ամուսնալուծումներու պարագայի գոյութիւնը.- Ինչ որ կը դիւրացնէ այսպիսի որոշում առնելը, լքելու արարքը դիւրին կ'ըլլայ եւ կեանքը առանց կողակցի՝ կարելի: Այս պարագային բաժանման հարցին կ'աւելնայ նաեւ ընտանեկան կողմնակալ կամ շահախնդիր միջամտութիւնը (դիտումնաւոր կերպով կամ անզգալաբար):

4) Առնական առանձնայատկութեան սպառնացումը.- Այն կինը, որ կը փորձէ իր ամուսնոյն վրայ բարձրէն գալ դրամի, պաշտօնի կամ պատկանելիութեան պատճառով, անոր մօտ կը խախտէ առնական առանձնայատկութեան համոզումը եւ անկէ կը խլէ արժէք մը, որմով տղամարդը կը հպարտանայ: Կինը անարդարացուցիչ կերպով անոր մօտ կ'արթնցնէ նաեւ վրէժխնդրութեան եւ թշնամական զգացումները:

5) Շատ աղքատութիւնը կամ շուրջը հարստութիւնը.- Այս երկու պարագաներն ալ հոգեկան անհաւասարակշռութիւն կը յառաջացնեն ամուսնէն մէկուն կամ երկուքին մօտ, մանաւանդ երբ հասունութեան պակաս կայ կամ անկարող են ապրելու նիւթական սակաւութեան կամ առատութեան պարագաներուն մէջ:

6) Յամառութիւնը.- Ամուսնութենէն մին կամ երկուքը յամառ կրնան ըլլալ: Այս պարագային որեւէ դիրք կամ տալանայ շրջանացելը դժուար կ'ըլլայ, որովհետեւ յամառ կողմը հաճոյք կը զգայ երբ հակամարտութիւնը մնայ եւ զօրանայ ու այդպէս շարունակուի, ինչ

որ կը յոգնեցնէ իր կողակիցը եւ անոր կեանքը դժոխքի կը վերածէ: 7) Յարձակողականութիւնը.- Ըլլայ այդ բերանացի՝ ինչպէս հայհոյանքը, տեւական քննադատութիւնը կամ խայթող հեգնանքը, կամ մարմնային՝ ինչպէս գարնելը: Այս արարքը կը փճացնէ սէրը եւ յարգանքը զգացական յարաբերութեան մէջ եւ վերջինս կը վերածուի բռնակալ տիրոջ եւ անիրաւուած աղախինի յարաբերութեան:

Երբ կողակցները կը զգան, թէ բացասական զգացումները կը հոսին իրենց կեանքէն ներս, անոնք պէտք է իրար հետ նստին, որպէսզի միասնաբար փնտուեն այդ վիճակնին պատճառները, առանց որ իրենցմէ իւրաքանչիւրը իրար վրայ բեռնէ անոր պատասխանատուութիւնը: Այս լուծումը կը չաջողի եթէ կողմերը բաւարար չափով հասունութիւն կը վայելեն, եւ այս ձեւը զգացական յարաբերութեան վերաբայ կը համարուի՝ գայն ճիշդ ուղիին վերադարձնելու նպատակով, առանց որ արտաքին կողմեր միջամտեն ու խառնուին այս հարցին մէջ:

Սակայն եթէ հարցերը բարդանան, երբորդ կողմին միջամտութիւնը անհրաժեշտ կը դառնայ, երբ կողմերէն մէկը կամ երկուքը կը պնդէ իր յամառութեան վրայ, ինչ որ արտաքին ջանքեր կը պահանջէ անոնց միջեւ համերաշխութիւնը վերադարձնելու: Այս մէկը չաջողացնելու համար պէտք է փոփոխութիւններ յառաջանան երկու անհատներուն դիրքերուն մէջ՝ համոզելով, ճնշելով կամ արտաքին երաշխիքներ տալով, որպէսզի մէկը միւսին իրաւունքին հանդէպ արդար ըլլայ:

Ամէն պարագայի կողակցները պէտք է գիտնան, որ կեանքը ընդհանուր առմամբ անհամաձայնութիւններէ գուրկ չէ, եւ երբ անոնք կը ձախողին զանոնք շրջանացելէ, այդ անհամաձայնութիւնները ժամանակի ընթացքին կը վերածուին հակամարտութիւններու: Հետեւաբար, անոնք կարիքը ունին սորվելու այն հիմնական ճիշտութիւնները, որոնցմով հարկ է լուծել ծագած անհամաձայնութիւնը, որպէսզի վերջինիս գոյութիւնը չի սպառնայ ամուսնին կեանքին ու կայունութեան: Այս ճիշտութիւնները կ'իրականանան ընթերցումներու եւ մասնագիտական դասընթացներու միջոցով:

Ինչպէս որ սովորական շրջանակներէ դուրս ելլելը կրնայ կարեւոր ազդեցութիւն ունենալ յարաբերութեան միաձուլման մէջ, նոյնպէս ալ նոր միացեալ գործունէութիւններու փորձառութիւնը օրինակի համար, կամ նոր վայրերու մէջ կատարուած հանդիպումները, կամ ժամանակաւորապէս իրարմէ քիչ մը հեռու մնալը կրնան օգտակար դառնալ յարաբերութեան կայծը դարձեալ վարելու, եթէ անշուշտ կողմերուն միջեւ հիմնական անլուծելի խնդիրներ չկան:



ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿԵԼԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ Է

Շարունակում է 1-ին

արիւնաբանական հիւսիսներ, չորերուն հետ քայքայում և այլն:

Այսօրուան կացութեամբ, տեղի ունեցող մարդկային ու նիւթական կորուստները իրենց ունեցած գոյնը դարձնում են մարդկային, ֆաղափարական, ժողովրդասիրական ու հայրենասիրական ամեն սկզբունքները՝ անհասկնալի օրէն կ'արդարացուցին ժողովրդավարութեան եւ օրինականութեան անուանով:

Հօ կ'երթայ Սուրիա... Տարակոյս չկար, որ սուրիական հայրենիքի այս անողորմ ֆաղափարական պատերազմը անպայման պիտի ժխտապէս, մահացու կերպով անդրադառնար ինչպէս սուրիացի սպայազական ժողովուրդին, նոյնպէս եւ սուրիական ասպնջական հայրենիքին վերելքին միշտ սատար՝ օրինապահ, երախտապարտ հայ համայնքին վրայ:

2011, Մարտ ամսէն ի վեր, երկրէն ներս կը տիրէ ապահովական տեսակէտէն խիստ դժուարին կեանքի պայմաններ: Վերջերս, ամբողջօրեայ օդանաւային ու օդակոծումներ, զինեալ ահաբեկչութիւններ, անճանապանական մահափիւռ պայքումներ, երկիրը մատնեցին դժոխային կացութեան: Այս պայմաններու հետեւանով տեղական համայնքներու շարքին նաեւ հայ համայնքը մատնուեցաւ անգործութեան, ապրուստի հոգացման ամբողջ տագնապի, հոգեբանական ցնցումներու, առողջապահական եւ դեղորայքի հոգերու:

Այսօր, սուրիահայ մեր համայնքը կարիքի մէջ է եւ պէտք ունի համայն հայութեան զօրաշարժեալ եւ համընդհանուր միասնական օգնութեան, որ ինքնին վաղուց

ծրագրուած պէտքեր ըլլար: Թուականէս ամիսներ առաջ ՄԱԿ ի նախաձեռնած հաշտարար բանակցութիւններու ճախողութիւնը կը յուշէր ֆաղափարական պատերազմի մը անխուսափելիութիւնը՝ սուրիական հայրենիքէն ներս, ուր հայ համայնքը եւս պիտի մատնուէր ծանր տագնապի: Առաջին անգամը չէ որ կը սքափիմք բք պատուհասը իր անբերները արդէն իսկ սկսած է գործել: Ամէն դէպքին՝ սքափելու եւ շուտափոյթ գործնականի անցնելու ժամանակն է մեր ձեռքերը երկարելու մեր տարաբախտ բոլորներու եւ երկրայիններու, մեր հայրենուն եւ մայրերուն, բոններուն ու ծոռներուն: Պիտի ազգովին տէր կանգնինք սուրիահայ զաղութիւն:

Հպարտութեամբ կ'արձանագրենք, մեր երեք անգամական կուսակցութիւններու, համայնքներու եւ բարեսիրական միութիւններու նախաձեռնութեամբ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանէն ներս «Սուրիահայրենասիրական Օժանդակութեան Գործադիր Մարմին»-ի մը նշանակումը, որ իբրեւ «արթուն հովիւն ու պահակը շրջանի հայութեան», արդէն իսկ ձեռնարկած է անմիջական դրամաօգնութիւններու, «կեանքի փրկելու եւ բարոյական ու հոգեկան ապահովութիւններ շնչեցնելու Սուրիոյ տարածքին դժուարին պայմաններու մէջ ապրող մեր բոլորներուն, երկրայիններուն եւ ազգային հաստատութիւններուն»:

Մեր կոչն է Միացեալ Նահանգաց Արեւմտեան շրջանի հայ համայնքին՝ լիովին ընդառաջ գալ նախաձեռնուած հանգանակութեան այս կառուցողական արշաւին, ազգային սրբազան պարտականութիւն մը կատարած ըլլալու վեհ գիտակցութեամբ:

«ՄԻՆՉԵՒ ԵՐԷԿ ԵՍ ՇԱՏ ԳՊԱՐՏ ԷՒ, ՈՐ ԳՈՐԾԱՐԱՅԻ ԵՍ»

Շարունակում է 6-էն

արտայանձնմանը հասնելու համար, այդ գումարները վճարուել է ընդդիմադիր գործիչներին»:

-Չեմ կասկածում, որ գործառք եղել է, բայց թէ կոնկրէտ ինչ գործարք եւ ում միջեւ, չեմ կարող ասել, մանրամասներ չգիտեմ:

-Այս որոշմանը Հունգարիայի իշխանութիւնները որեւէ հիմնաւորում տուէ՞ն:

-Հունգարիայի արտգործնախարարութեան կայքում գրուել է, որ այդ որոշումը համաձայն է միջազգային ինչ-որ նորմերի: Ինձ համար դա արդարացում չէ: Եթէ թալանին վերաբերէր այդ յանցանքը, կարելի էր անտալանձնել, բայց սա բացառիկ յանցագործութիւն էր: Նոյնիսկ եթէ աշխարհի բոլոր նորմերին համապատասխանէր, ոչ մի բարոյական նորմի չէր համապատասխանում այս որոշումը: Այս որոշումը անկանխատեսելի էր: Սաֆարովի դատավարութիւնն անցկացուել էր

ամենաճիշդ ձևով: Ատրըպէյճանն 8 տարի շարունակ դիմել է այս հարցով, բայց մերժուել, վաղջ այսքանից չեսոյ ո՞նց կարող էր արտալանձնել:

-Երկու օր է յայտնի է այդ որոշման մասին, որպէս հունգարացի՝ ձեր նկատմամբ վերաբերմունքի փոփոխութիւն նկատու՞մ էք:



-Վերաբերմունքն աւելի դրական է դարձել: Ինձ սկսել են աւելի շատ դիմել նամակներով եւ այլն: Այսօրուայ ակցիային ինքս մասնակցել եմ որպէս հայ, նաեւ որպէս հունգարացի՝ որպէս բարոյական արժէքներ դաւանող հունգարացի:

Հունգարացի հայագէտը վերջում յաւելեց. «Հայաստանն կարող է վստահ լինել որ Եւրոպայում ունի մի բարեկամ ժողովուրդ եւ մի բարեկամ կուսակցական դաշինք, որ անկախ այս անբարոյական արարքից, շարունակում է Հայաստանի շահերը պաշտպանել Եւրամիութեան հետ յարաբերութիւններում»:

Լիզա Համբարձումեան

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ
ՅՈՒՇԱՐՁԱՆ
ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ
ԲԵՆԻԱՄԻՆ
ԺԱՄԿՈՉԵԱՆԻ

Մրտաբույս մուտքով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 797-7680 կամ
(818) 429-2322 քիւերուն

Լարակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաբաղը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ ԱՆԳԱՐԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

Շարունակում է 7-էն

տի ուղէի յայտնել իմ շնորհակալութիւնը այս հանդիպման համար իմ ԱՄՆ այցելութեան առթիւ Յունիսի սկիզբները (2003-ին)»:

Յաջորդ տարին Ուաշինգթոնի դեսպանատան պաշտօնեայ Պրն. Թիւմուր Սէօյլէմէզի միջոցաւ մեզի յղած պատգամով դեսպան թէզքան կ'առաջարկէր դարձեալ հանդիպում մը մեր խումբին հետ 2004-ի Ապրիլին: Մենք փոխանցեցինք այս հրաւերը մերժելու մեր պատասխանը հետեւեալ պատճառներով.

1. Բացայայտ պէտք է ըլլայ, որ Ապրիլ ամիսը ամենայարմար ամիսը չէ այս տեսակի երկխօսութեան համար:
2. Մենք տակաւին կը կառ-


չինք մեր լաւատես յոյսին, որ թուրք կառավարութիւնը պիտի ընդառաջէ վստահութիւն ներշնչող միջոցառումներով՝ մասնաւորաբար այն հարցերու առնչութեամբ, որ հակառակ է մեզ համար իբրեւ սփիւռքահայեր:

3. Ակնդէտ կը սպասենք, որ թուրք կառավարութիւնը ճանչնայ Հայաստանի Հանրապետութիւնը եւ վերացնէ շրջափակումը:


4. Կը սպասենք, որ վերոյիշեալ դրական միջոցառումները տեղի ունենան, եւ շարունակենք մեր երկխօսութիւնը թէ հայ եւ թէ թուրք ժողովուրդներու հասարակաց օգտին համար:

Անդրադարձ մը այս բոլորին չիրականացաւ, եւ երկխօսութիւնը այստեղ ալ վերջ գտաւ:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախոսակներու եւ մտնուկներու Թայրոպիաթիք բուժում:
 Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաւեր:
 Բնականաբար վթարի հետեւանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՓԱՐԻԶԻ Ա. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐԻԻՐՏԱՍ ԱՄԵԱԿԻՆ 1902-2012

Շարունակուած էջ 14-էն
որ խոտոր կը համեմատի Հայ Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդին միասնական ոգիին:

Անժխտելի իրականութիւն է Նիսի Պոլսահայ գանգուածին հաւատարմութիւնը հանդէպ էջմիածնին, եւ Հայ Եկեղեցւոյ հանդէպ ընդհանրապէս: Բայց՝ անհասկնալի է նոյն ժամանակ նոյն համայնքին հանդուժողութիւնը կարգազուրկ եկեղեցականի մը թողատրելու որ Պատարագ մատուցանէ: Արդեօ՞ք նուազած է հաւատքը մեր ժողովուրդին մէջ, արդեօ՞ք այս իրավիճակը թելադրուած է Յրդ ուժէ մը: Ժամանակը անոր պատասխանը պիտի տայ:

Կ'իմանանք, որ Ֆրանսահայ կարեւոր կազմակերպութիւններ հակառակ են Նիսի այս ազգամիաս ընթացքին:

Նիսի Ծխական Խորհուրդին ընթացքը հակընդէմ է Պոլսահայուն Եկեղեցասէր նկարագրին եւ աւանդութեանց: Շահախնդրական, անհետեւ կիրքեր առաջ կը բերեն դժուարութիւններ եւ սխալ հասկացողութիւններ, որոնք մեզ կ'առաջնորդեն անօգուտ խնդիրներու եւ վաղուան յուսախաբութեանց:

Հարիւրամեակին հանգրուանին կը մտախոհեմք որ Նիսի հաւատացեալ ժողովուրդը խաղաղ համե-

րաշխ ոգիով վերադառնայ Մայր Աթոռոյ հովանիին ներքեւ եւ անգամ մը եւս ցոյց տայ հայուն բարեպաշտ եւ նախանձախնդիր ոգին իր հարազատ սրբութեանց եւ աւանդութեանց հանդէպ:

Այսօր ուրախ ենք, որ Ֆրանսայի Թեմը մէկ է, ամբողջական եւ մէկ Առաջնորդով՝ յանձինս՝ Գերշ. Տ. Նորվան Արք. Զաքարեանի: Իր ջանքերը՝ Հայրապետին օրհնութեամբ եւ քաջակերութեամբ, կրցան ի մի բերել Ֆրանսայի տարածքին տարտղուած եկեղեցիները՝ կազմելով Թեմական ամբողջութիւն մը յատուկ Կանոնադրութեամբ, որ ժամանակի ընթացքին պիտի դառնայ ողջ Ֆրանսահայ Թեմի պաշտօնական Կանոնադրութիւնը:

Առաջնորդ եւ Հօտ համերաշխ գործակցութեամբ պիտի կարենան դարմանել անհամաձայնութիւններ: Ակներեւ է այստեղ Առաջնորդ Սրբազան Հօր համբերատար ոգին եւ լսելու առաքինութիւնը որ ըստ ինքեան դրական երեւոյթ մըն է որեւէ խնդրի լուծման: Լուրջ եւ շրջահայեաց ջանքերով վստահ եմ որ գործերը ապարդիւն պիտի չանցնին, բաւ է բարի տրամադրութիւնները:

Օրհնեալ թող ըլլայ բարի նպատակները: «Աշխատինք լաւ խորհելու, ահաւաստիկ բարոյականի սկզբունքը»:

«ԵԱՆ»ԵՐԸ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱՐՈՒԵՍԻՆ ՍԷՋ

Շարունակուած էջ 15-էն

գործութիւնները: Անոնցմէ ոմանք բժիշկներ, համալսարանականներ եւ գործատէրեր են, որոնք նկարչութեան արուեստով վարակուած՝ կը ստեղծագործեն:

Հատորին մէջ գետնդրուած նկարները, մէկը միւսէն աւելի իմաստալից են: Այդ արուեստագէտներուն նկարած նիւթերն են՝ բնութիւնը, համամարդկային հարցեր, ազգային կտորներ, բայց մանաւանդ՝ ժամանակակից տառապող մարդուն աւօրեայ կեանքէն առնուած եւ մտածումներէն թելադրուած խորամիտ կտորներ, նկարներ, որոնք որքան դիտես, մտածելու, խորհելու եւ խոկալու առիթ կու տան քեզի:

Ջերմօրէն կը շնորհակտրենք մեր կրտսեր պաշտօնակիցը՝ Տայա-

նա Տէր Կարապետեանը, այս խիստ շահեկան եւ շնորհակալ գործին համար, մաղթելով իրեն նորանոր արժէքաւոր գիրքերու հրատարակութիւններ: Արդարեւ, այս գիրքը արժանութիւնահայ գաղութի պատմագրութեան մէջ մեծ աղբիւր մըն է. որքան ժամանակը անցնի, աւելի պիտի արժեւորուի այս գործը արժանութիւնահայ գաղութին լուսաշող այս դէմքը տեսնելով:

Գնահատանքի յատուկ խօսք ունինք, Արժանիինի ծանօթ մտաւորական՝ Պետրոս Հաճեանին եւ երիտասարդ թարգմանիչ՝ Անայիա Կէօզիլզարայեանին, անոնց կատարած գեղեցիկ թարգմանութեան համար:

Այս թանկարժէք հատորէն ունենալու համար դիմել (sardarabad@sardarabad.com.ar) կայքէջին:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՍԷՋ «ՂԵԿԱՎԱՐՄԱՆ» ԵՐԿԱՅՆՔԸ, ԼԱՅՆՔԸ ԵՒ ԽՈՐՔԸ

Շարունակուած էջ 17-էն

մէկը: * Դիտմամբ կ'անտեսէ իր ընկերակիցին փափաքները, պահանջները, սպառնալիքները եւ պէտքերը, որպէսզի յարաբերութեան իր ուզած ընթացքը ապահովէ: * Տրամաբանական պատճառաբանութիւններ կը տրամադրէ վիրաւորական վարուելակերպը բացատրելու: Այս ձեւը կրնայ շատ ազդու ըլլալ, որովհետեւ կը նուազեցնէ իշխող անհատին յանցանքի զգացումը եւ կ'արգիլէ համոզուած գոհին՝ հարցաքննելու վերաբերմունքը: * Յարձակողը ընդհանրապէս վարպետ է սուտ խօսելու եւ խաբելու մէջ: Ստախօսութիւնը, իրականութիւնը շրջելը եւ անորոշ պատասխաններ տալը՝ ընկերակիցի որոշ հարցումներուն, բոլորը խաղեր են իր ուզածին հասնելու համար: * Ծածուկ դաւեր կը պատրաստէ գոհը անձկակից վիճակի մէջ դնելու՝ երկու յարձակողական ձեւեր օգտագործելով: Առաջինը՝ «յանցանք»ի ձեւը, երբ կողակիցը կ'այսպէս բաւարար հոգատարութիւն չկատարելու կամ յարաբե-

րութեան մէջ ջանք չթափելու ամբաստանութեամբ: Իսկ երկրորդը՝ «ամօթ»ի ձեւը, երբ հեզուութեամբ ու քննադատութեամբ ընկերակիցը անարժէք կը զգացնէ: * Իշխող ղեկավարող անձը գիտէ ինչ հարցեր արծարծել՝ ընկերային վիճակներ, ընտանեկան կամ առողջական հարցեր, եւայլն, որպէսզի այնպէս մը երեւի, որ ինք կը տառապի եւ պէտք ունի համակրանքի: * Այս կէտը շատ ընդհանրական է այսպիսի անձերուն մօտ. ձեւանալ, որ մեծ նպատակի մը համար կ'աշխատի, մինչ կեդրոնացած կ'ըլլայ անձնական ծրագիրներու՝ գօրաւորի դիրքին հասնելու եւ ուրիշները հակադրուելու վրայ: * Փաղաքէլը եւ գովաբանելը այս անձին լաւագոյն միջոցներն են ուրիշները խաբելու, մանաւանդ անոնք, որոնք ի մասնաւորի պահանջկոտ եւ ուրիշէն կախեալ անձեր են: * Ան կը պնդէ, որ իր վերաբերմունքը անպատասխանատու կամ վնասակար չէ, ինչպէս ուրիշներ կը կարծեն: Այս մէկը «խելացի» քայլ մըն է, որ կը միացնէ թէ՛ ուրացում եւ թէ՛ արհեստական համագործակցութիւն:

ԱՐՏԱՍԱՐԱՆԻ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Ստորեւ կը հրատարակենք Լոս Անճելոսի Լիբանանի աւագ հիւպատոս ճոնի Իպրահիմի հետեւեալ շրջաբերականը, Լիբանանի յառաջիկայ Երեսփոխանական ընտրութեանց վերաբերեալ:


2013 թուականին Լիբանանի մէջ կայանալիք Երեսփոխանական ընտրութեանց որպէս նախապատրաստութիւն Լոս Անճելոսի Լիբանանի աւագ հիւպատոսութիւնը՝ այս շրջանի բոլոր լիբանանցիներուն կը յիշեցնէ որ իրենց անունները պէտք է արձանագրել տան 2013 թուականի երեսփոխանական ընտրութիւններու ընտրացուցակին մէջ: Այս մէկը պէտք է կատարուի Դեկտեմբեր 31, 2012-էն առաջ, անձամբ ներկայանալով հիւպատոսարանի գրասենեակը ստորագրութեան համար եւ կամ թղթատարով առաքել ամերիկեան նոտարի մօտ ստորագրելէ ետք, որուն պէտք է ընկերակցի անցագրի կամ անձնաթուղթի պատճէնը: Յաւելեալ տեղեկութեանց համար կարելի է կապ հաստատել էլեկտրոնային հասցէով www.lebanonconsulatela.org կամ հեռաձայնել ընդհանուր հիւպատոսութեան գրասենեակը հետեւեալ հեռախօսահամարին 213-243-0999:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք
«Սասիս» Շաբաթաթերթին**
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

REQUEST FOR PROPOSALS (RFP #7567) WORKERS' COMPENSATION THIRD PARTY CLAIMS ADMINISTRATION
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified Third Party Administrators to administer the Authority's Self-Insured Workers' Compensation Program. A copy of the RFP may be obtained beginning August 20, 2012 at <http://www.hacla.org/ps/> or call 252-5405. Proposals will be accepted until 2:00 P.M., by September 21, 2012 at the Authority's General Services Dept., 2600 Wilshire Blvd., 4th floor, Los Angeles, CA 90057.
8/30, 9/6/12
CNS-2363994#
MASSIS WEEKLY

«ԳԱՋ ՆԱԶԱՐ»
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:30
Կլէնտլէյի
380-րդ կայանից

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

ARMENIAN INDEPENDENCE DAY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

Փառապանակ FESTIVAL

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION



SUNDAY SEPTEMBER

16, 2012

VERDUGO PARK

GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

Special Performances by:



Hosted by:



Dance Performances By:
Nor Serount Dance Ensemble
Lilia Dance Studio

DJ By:



Sponsors

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ

ՓՈԲՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

ՀԱՍԱԴԱՍ ՃԱՇԵՐ

- Live Music
- Dancing
- Art Work Exhibition
- Kids Games
- Armenian Food



To reserve your vendor booth please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցեք Նոր Սերունդ Մշակութային Միության

(818) 391-7938



ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC.



Great Tasting Natural & Organic Foods



www.massispost.com